

## Մեծ Եղեռնի 100-ամեակի Կազմակերպիչ Մարմնի Մամլոյ Ասուլիսը

Կլենտոնի «Ֆինիշիա» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 100-ամեակի Կազմակերպիչ Մարմնի մամլոյ անդրանիկ ասուլիսը: Այս առթիւ Կազմակերպիչ Մարմնի համա-ատենապետ Իրաւաբաններ Կարօ Ղազարեան եւ Թալին Եղեռնեան ներկաներուն հայերէն եւ անգլերէն լեզուներով պարզեցին նախատեսուած հետեւեալ կարեւորագոյն միջոցառումները.

Ա. Ապրիլի 14ին միջ-յարանուանական յուշահանդէս Լոս Անձե-լոսի Կաթողիկէ Մայր Տաճարին մէջ:

Բ. Ապրիլի 23-ին հայ համայն-քի հոգեւոր ներկայացուցիչներու մասնակցութեամբ Սուրբ Պատարագ Սուրբ Ղեւոնդ Մայր Տաճարին մէջ:

Գ. Ապրիլի 24-ին համաժո-

ղովրդային 10 քիլոմետր երկարու-թեամբ ցոյց փոքր Հայաստանէն մինչեւ Թրքական հիւպատոսարան:

Դ. Ապրիլի 26-ին յուշահանդէս Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին առջեւ եւ Մեծ Եղեռնի 100-ամեակի յուշատուն Կլենտոնի Ալեքս Թատերասրահին մէջ, կազմակերպութեամբ Կլենտոնի քաղաքապետական Խորհուրդին եւ աջակցութեամբ 100-ամեակի համազարգացի մարմնին:

Կ'իմասանք նաեւ, որ ՀԲԸՄի Ասպետներու Համախմբումը եւս ծրագրած է եւսօրեայ ցուցահանդէսով մը նշել 100-ամեակը Ապրիլի կէսին: Այս առթիւ ներկայ պիտի ըլլայ Երեւանի Յեղասպանութեան թանգարանի տնօրէն Հայկ Տեմոյեան եւ այլ հայրենի ականաւոր անձնաւորութիւններ:

## Յրանդ Տինքի Մահուան 8-րդ Տարելիցին Առթիւ Թուրքիոյ Վարչապետի Կոչը Յայտարարեան

Թուրքիոյ վարչապետ Ահմատ Տաւուսօղլու Հրանդ Տինքի սպանութեան 8-րդ տարելիցին հետ կապուած յայտարարութիւն մը հրատարակեց, հայերուն կոչ ուղղելով նոր սկիզբի հիմեր դնել: «Արդէն 8 տարի է, որ մեզի հետ չէ Հրանդ Տինքը: Ան կը փորձէր իր զգացումներով եւ միտքերով լուսաւորել Օսմանեան կայսրութենէն Թուրքիոյ հանրապետութեան ան-

ցած կարեւոր խնդիրներէն մէկը: Տինք թանկարժէք մտաւորական էր, որ կը փորձէր ճամբաներ գտնել հայերու եւ թուրքերու համատեղ ապագան կառուցելու համար», ըսաւ Տաւուսօղլու: Ան «հայ-թրքական բարեկամութեան հաւատացող բոլոր անձերը հրաւիրեց նոր սկիզբի համար աջակցութիւն ցուցաբերելու»:

Շաբ.ք էջ 18

## Հայկական կողմը մեղադրանք ներկայացուց Պերմյակովին



Փոքրիկ Սերյոժա Աւետիսեանի յուղարկւածութեան ընթացքին ժողովուրդը հաւաքուած եկեղեցւոյ շուրջ

Յունուար 21-ին տարածուած պաշտօնական հաղորդագրութեան մը համաձայն, հայ քննիչները հարցաքննելէ ետք Աւետիսեաններու ընտանիքի անդամներու սպանութեան մէջ մեղադրուող Ռուս բանակային՝ Վալերի Պերմյակովին մեղադրանք ներկայացուած են ընտանիքի 7 անդամներու սպանութեան մէջ:

Ըստ որոշ տեղեկութիւններու, ռուսական ռազմականներու սպանութեան եւ Հայաստանի Քննչական կոմիտէներու ղեկավարները շուրջ երեք ժամ տեւած հանդիպում մը ունեցած են, որու ակարարին համաձայնութիւն գոյացած է փոխգործակցութեան շտաբ ստեղծելու կապակցութեամբ: Այս համաձայնութիւնը գոյացած է քննութեան աջակցելու նպատակով Հայաստան եկած ռուսաստանցի բարձրատիճանի պաշտօնեայ՝ Ալեքսանտր Բաստրիկինը ու անոր գործընկեր Արուստ Գոլոմոսովին մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին:

Իրաւապաշտպան վարդան Յարութիւնեան «Ազատութիւն» ռատիոկայանին կարծիք յայտնեց, որ լարուած իրավիճակը մեղմելու եւ հայկական կողմի արժանապա-

տուութիւնը պաշտպանելու համար անհրաժեշտ է յստակ որոշում՝ Պերմյակովին Հայաստանին յանձնելու մասին:

«Յանկացած միջանկեալ լուծում կամ ցանկացած իրավիճակային լուծում, ինչպիսին այս շտաբն է կամ ապագայում էլ ինչ-որ փորձեր են լինելու, չի կարող հանդարտեցնել կրքերը: Միակ ձիւղ լուծումը՝ հայկական կողմին յանձնել է, որը կը հանդարտեցնի կրքերը եւ արժանապատուութեան խնդիր չի դրուի», - ըսաւ Յարութիւնեան:

Իրաւաբան Արա Ղազարեանի կարծիքով սակայն, քիչ նարաւոր է որ Պերմյակովին յանձնուի Հայաստանին: «Եթէ նրանք ձերբակալու են կատարել Հայաստանի տարածքում, դա արդէն իսկ այս պայմանագրի խախտում է: Եթէ սահմանի վրայ է՝ ռուս զինուորը ունի իրաւազօրութիւն, եթէ արդէն հայկական տարածքում է, ուրեմն՝ լաւ, անհրաժեշտութիւն է առաջացել ձերբակալում իրականացնել, բայց միանգամից պէտք է տեղեկացնի հայկական կողմին եւ յանձնի հայկական կողմին», - ըսաւ

Շաբ.ք էջ 18

## Ուրուկուէյի Նախագահը Ընդունած է Հոլանդաւորել 100-Ամեակի Միջոցառումները



Ուրուկուէյի գործող նախագահ՝ Խոսէ Մուխիկա պաշտօնավարութեան շրջանը ակարտելուն առթիւ հրաժեշտի հանդիպում ունեցած է հայ համայնքի ղեկավարներուն հետ:

Հանդիպման մասնակցած են երկրի գրասաշրջութեան նախարար Հայագրի Լիլիան Քէշիշեան, Հայաստանի պատուոյ հիւպատոս Ռուբէն Աբրահամեան, Հայոց թեմի առաջնորդ Յակոբ արքեպիսկոպոս Գէլլենեան եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Նախագահ Մուխիկա, ընդառաջելով հայ համայնքի խնդրանքին, համաձայնած է իր բարձր հովանաւորութիւնը տալ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ Ուրուկուէյի մէջ տեղի ունենալիք ձեռնարկներուն: «Գիտեմ, որ թուրքերը կը նեղանան, սակայն համոզուած եմ, որ ցեղասպանութիւն տեղի ունեցած է, եւ եթէ կրնամ օգտակար ըլլալ՝ սիրով», - ըսած է ան:

Անցեալ Դեկտեմբերին կայացած ընտրութիւններուն, Ուրուկուէյի նոր նախագահ ընտրած էր Տաբարէ Վասկեզ, որ իր պաշտօնը պիտի ստանձնէ Մարտի 1-ին:

## Հայաստան Կը Մերժէ Էրտողանի Հրակերը

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտարարեց, որ Կալիփօղլի արշաւի յիշատակը Ապրիլ 24-ին նշելու թրքական որոշումը տեղին չէ: Նախարարը յիշեցուց, որ Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայիպ Էրտողան տակաւին չէ պատասխանած Յեղասպանութեան հարիւր ամեակի ոգեկոչումին մասնակցելու հրաւերին: Այս մասին Յունուարի 20-ին, Պրիւքսէլի մէջ կայացած մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարեց նախարար Նալբանդեան:

Նախարարը ընդգծեց, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հրաւիրած է իր թուրք

գործընկերը՝ Ռեժեփ Թայիպ Էրտողանին, մասնակցելու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումներուն: Ան յայտնեց, որ հայկական կողմը անմիջապէս պատասխանած է Թուրքիոյ նախագահի հրաւերին, որ Սերժ Սարգսեան կը մերժէ հրաւերը մինչեւ այն ատեն, երբ Թուրքիա կը շարունակէ ժխտել Հայոց ցեղասպանութիւնը:

«Այնքան էլ տեղին չէ որեւէ բան կազմակերպել Ապրիլի 24-ին, յատկապէս Թուրքիայում: Ես չեմ կարող հաւատալ, որ ռեճեփ մէկն աշխարհում կարող է հասկանալ դա», - ըսաւ Հայաստանի ԱԳ նախարարը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

# Սեփական արժանապատուութիւնից վախեցածները

## ՄԱԿ ԿՆՏԱՆԵԱՆ

Գիւմրիի իրադարձութիւններն ու դրանց յաջորդած զանգուածային ցոյցերը միանգամից բացայայտեցին Հայաստանի՝ որպէս պետութեան, բոլոր ուժեղ եւ թույլ կողմերը: Որոշ կառույցներ իրենց նորմալ դրսեւորեցին, որոշ կառույցներ՝ խայտառակ վատ, որոշ կառույցներ կարծես ընդհանրապէս գոյութիւն չունէին, ուստի այս ամէնը սթափ հայեացքով զնահատելու եւ վերլուծելու կարիք կայ: Սկսենք հասարակութեան արձագանքից: Բողոքի ակցիաները միանգամայն բնական էին՝ աշխարհի ցանկացած այլ երկրում նոյնը տեղի կ'ունենար: Ընդ որում՝ այնպէս չէ, որ տասնեակ հազարաւոր մարդիկ փողոց էին դուրս եկել հակառուսական լողուններով: Ճիշդ հակառակը. մէկը հակառուսական ինչ-որ բան էր ասում՝ տասը հոգի կողքից յորդորում էին այդ թեման չզարգացնել, մէկը փորձում էր այլըն Ռուսաստանի դրօշը՝ տասը հոգի կողքից յորդորում էին շանել դա եւ այլն: Պարզապէս մարդիկ պահանջում էին Հայաստանին յանձնել ոճրագործին, որովհետեւ որքան էլ Ռուսաստանը մեր ռազմա-

վարական դաշնակիցը լինի՝ այնուամենայնիւ մենք նամուս-թասիբ ունեցող ժողովուրդ ենք եւ թույլ չենք տալ մեզ նուաստացնել՝ շահարկելով դա: Մի խօսքով՝ հասարակութեան արձագանքը միանգամայն նորմալ էր: Հիմա՝ պետական ինստիտուտների պահուածքի մասին: Սերժ Սարգսեանն ընդհատակ էր անցել եւ այդպէս էլ ծպտուն չհանեց: Լաւ, ենթադրենք՝ առանձնապէս ասելու բան չունէր, ինչ էլ ասէր՝ կամ ժողովրդին էր բարկացնելու, կամ Ռուսաստանին, դրա համար էլ գերադասեց սուս մնալ: Բայց խայտառակ լուրերն պահպանեց նաեւ արագորձնախարարութիւնը: Թէ որ «Չանդամում» էր էդուարդ Նալբանդեանը՝ յայտնի չէ, բայց խնդիրը մեծ հաշուով արտաքին-քաղաքական էր՝ խաղասեղանին հայ-ռուսական յարաբերութիւններն էին: Այսինքն՝ առնուազն Հայաստանում ՌԴ դեսպանը պիտի հրաւիրուէր արագորձնախարարութիւն, եւ նրան պիտի բացատրէին, որ եթէ ոճրագործը հայկական կողմին չյանձնուի՝ հայ-ռուսական յարաբերութիւնները մեծապէս կը տուժեն, եւ ինքը լաւ կ'անի՝ դիւանագիտական խո-

ղովակներով այդ ինֆորմացիան հասցնի կրեմլ: Խայտառակ պահուածք դրսեւորեց նաեւ դատախազութիւնը: Գլխաւոր դատախազի անհոգաբաշխ բացատրութիւնները միայն աւելի բորբոքեցին ցուցարարներին, իսկ ռուսական լրատուամիջոցները միայն ծաղրեցին նրա անողնաշար պահուածքը, որովհետեւ նա, պարզուեց, նոյնիսկ ոճրագործին հայկական կողմին յանձնելու գրաւոր պահանջ չի ներկայացրել (միայն ոճրագործութիւնից չորս օր անց նա «տղամարդավարի» խոստացաւ անել դա): Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ ստեղծուած իրավիճակում իրեն շատից-քչից նորմալ դրսեւորեց միայն ոստիկանութիւնը: Սա գուցէ շատերին դուր չգալ, բայց եկէք ճիշդ հասկանանք իրավիճակը: Եթէ մենք այս իրավիճակում փորձում ենք ներկայանալ որպէս պետութիւն (իսկ դա կարծես թէ բոլորիս թիւ մէկ պահանջն է), ոստիկանութիւնը պարտաւոր էր ապահովել մեր երկրում օտարերկրեայ դիւանագիտական ներկայացուցչութիւններին (տուեալ դէպքում՝ Գիւմրիում ՌԴ հիւպատոսարանի) անվտանգութիւնը: Այսինքն՝ «մենք ինքնիշխան պետութիւն ենք, որպէս ինքնիշխան պետութիւն՝ ապահովում ենք ձեր դիւանագիտական անձեռնմխելիութիւնը, բայց որ-

պէս ինքնիշխան պետութիւն էլ ձեզանից պահանջում ենք յարգել մեր օրէնքները եւ ոճրագործին յանձնել մեզ»: Նորմալ է, այդպէս էլ պիտի լինէր (սա, հասկանալի է, վերաբերում է միայն Գիւմրիի դէպքերին, որովհետեւ Երեւանի Ազատութեան հրապարակում նոյն ոստիկանութիւնն իրեն ամենեւին էլ նորմալ չի պահել): Բայց այս դէպքում էլ ոստիկանութեան զօրքերի հրամանատար, գեներալ Լիովա Երանոսեանն անմիջապէս «համը հանեց»՝ յայտարարելով, թէ Գիւմրիում ցուցարարների 80 տոկոսը հարբած է եղել: Հասկանում էք, թէ որն է խնդիրը: Լաւ, ենթադրենք՝ Հայաստանի իշխանութիւններն անողնաշար են, վախեցած են, բայց նրանք գոնէ պիտի հպարտանային, որ ժողովուրդը «նամուս-թասիբ» ու արժանապատուութիւն ունի: Դրա փոխարէն ասում են «չէ, այ մարդ, ի՞նչ նամուս-թասիբ, մեր ժողովուրդը նման բաներ չունի, ուղղակի խմած են եղել՝ աւելորդ բաներ են արել»: Սա, հասկանալի է, ասում է ռուսներին, որպէսզի յանկարծ լուրջ չընդունեն բողոքի ակցիան: Այսինքն՝ Հայաստանի բոլոր պետական եւ ոչ պետական կառույցներից ու ինստիտուտներից միայն հասարակութեան պահուածքն է արժանապատիւ եղել, իսկ ոստիկանութիւնը փորձում է նոյնիսկ դա «հարամել»:

Մի խօսքով՝ մենք ունենք արժանապատուութիւն ունեցող ժողովուրդ եւ այդ արժանապատուութիւնից վախեցած իշխանութիւններ: Ու սա Գիւմրիի իրադարձութիւնների թերեւս ամենակարեւոր արձանագրումն է:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

# Ամերիկացի համաճախագահը զգուշացնում է Ատրպէյճանին

## ՅԱԿՈԲ ԲԱՒԱԼԵԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորըլթը թուրքերեան իր միկրոբլոկում Արցախի հակամարտութեան կարգաւորման գործընթացի վերաբերեալ հերթական գրառումն արել է շփման գծի դիտարկման ընթացքում միջադէպի վերաբերեալ: ԵԱՀԿ մշտադիտարկում իրականացնող առաքելութեան աշխատանքի ընթացքում ատրպէյճանական կողմը կրակ էր արձակել, ինչի հետեւանքով ԵԱՀԿ ներկայացուցիչները դադարեցրել են դիտարկումը: Ուորըլթն անդրադարձել է այդ խնդրին, գրելով. «Կրակոցները, որոնք, ինչպէս հաղորդում է, արձակուել են Լեռնային Ղարաբաղում ԵԱՀԿ դիտարկման անցկացման վայրից ոչ հեռու, կողմերի անվտանգութեան երաշխիքների բացայայտ խախտում են»:

Ամերիկացի համանախագահը, ինչպէս Մինսկի խումբն ու միջազգային կառույցները, հերթական անգամ արտայայտում է հաւասարութեան անորոշ նշանով: Սակայն պէտք է որ վաղուց պարզ լինի, որ միջազգային կառույցներից կամ համանախագահներից կոնկրետ, հասցէական մեղադրական կամ քննադատական զնահատականներ ու յայտարարութիւններ ակնկալելն անիմաստ է, նրանք ասելիքն արտայայտում են տողատակում, ինչպէս որեւէ համանման իրավիճակում, որտեղ անմիջականորէն խաչուում են աշխարհաքաղական շահեր՝ դրանց կրողների անմիջական մասնակցութեամբ: Իսկ Ուորըլթի արտայայտութեան տողատակում նկատելիորէն արտայայտում է զգուշացումը Ատրպէյճանին: Նա ասում է, որ կատարուածը «կողմերի անվտանգութեան երաշխիքների բացայայտ խախտում է»: Ո՞վ է եղել

խախտողը: Ատրպէյճանը, եւ պարզ է, որ այդ մասին գիտեն բոլորը, որքան էլ որ Ուորըլթն իր արտայայտութեան մէջ չի տալիս խախտող կողմի կոնկրետ անունը: Բայց բոլորը գիտեն, որ խօսքն Ատրպէյճանին մասին է, այդ թուում նաեւ գիտէ Ատրպէյճանը: Հետեւաբար, իրավիճակն առաւել քան պարզ է, եւ այդպիսի պայմաններում անունների կարիք էլ չկայ, առաւել եւս, որ Ուորըլթի յայտարարութիւնն այսպէս ասած լայն հանրային շերտերի համար չէ, այլ գործընթացում ներգրաւուած սուբիեկտներին: Հետեւաբար ակնարկը պարզ է՝ եթէ Ատրպէյճանը բացայայտ խախտում է կողմերի անվտանգութեան երաշխիքները, հետեւաբար այդ մասին Ուորըլթի յիշատակումն ուղղակի զգուշացում է Ատրպէյճանին, որ դրանով Պաքուն՝ որպէս կողմ, հենց իր անվտանգութիւնն է դնում սպառնալիքի տակ, գրկուում է հենց իր «անվտանգութեան երաշխիքներին»:

Այլ կերպ ասած, ամերիկեան կողմը փաստացի հերթական անգամ հաւանութեան է արժանացնում հայկական կողմի այն մօտեցումը, որ սահմանային անվտանգութիւնն ու կայունութիւնն ընդհանուր առմամբ ապահովելու համար հայկական զինուոր իրեն իրաւունք է վերապահում կիրառել կանխարգելիչ գործողութիւնների մարտավարութիւն, հարկ եղած դէպքում թէ զինծառայողների, թէ սահմանամերձ բնակավայրերի բնակչութեան անվտանգութիւնն ապահովելու համար: Օրերս այդ մասին յայտարարել էր նաեւ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը, ասելով, որ պէտք է վաշտի եւ դասակի հրամանատարներին տալ տեղում եւ իրավիճակում գործողութիւնների մշակման ազատութիւն: Դա յայտարարութիւն է հայ-ատրպէյ-

ճանական սահմանին պաշտպանական նոր մարտավարութեան մասին, որը նաեւ Ատրպէյճանի ապահովագրողական եւ սադրիչ քաղաքականութեան պայմաններում համարժէք եւ սպասուած մարտավարութիւն է: Ամերիկացի համանախագահի յայտարարութիւնը, կամայ թէ ակամայ, բայց հաւանութեան է արժանացնում հայկական կողմի այդ մարտավարութիւնը: Այստեղ, ի դէպ, անակնկալ չկայ, եւ ոչ այն պատճառով, որ Պաքուն Ուորըլթի գործունէութեան առաջին իսկ դրուագներից ի վեր նրան մեղադրում է հայամէտ գործունէութեան համար: Բանն այն է, որ ԱՄՆ վերջին շրջանում մի շարք էական աջակցութիւն է ցուցաբերել հայկական զինուորին: Այստեղ անշուշտ համակրանք կամ հակակրանք փնտուելը միամիտ գործ է, պարզունակ զբաղմունք: Խնդիրը համակրանք չէ, այլ քաղաքական իրավիճակն ու դրանում շահերի դասաւորուածութիւնը: Եւ այն, ինչ անում է ներկայում Ատրպէյճանը սահմանային լարուածութիւն հրահրելու փորձերի տեսքով, հակասում է կովկասի վերաբերեալ եւրատլանտեան ռազմավարութեանը: Եւրատլանտեան բեւեռը կովկասում սկսել է վերակազմակերպման նոր եւ բաւական նուրբ մի գործընթաց, որի արդիւնաւետութիւնն էսպէս կախուած է ռազմական կայունութիւնից: ԱՄՆ ճշգրտորէն արձանագրել է, որ այդ հարցում չի կարող ունենալ առաւել յուսալի գործընկեր, քան հայկական զինուած ուժերը: Շահերի այդ տրամաբանութեամբ է, որ ԱՄՆ վերջին շրջանում ընդգծուած կերպով հակադրուում է Պաքուի քաղաքականութեանը, որի նպատակն է կովկասը

Շաբ.ք էջ 18



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արևմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանում Դրամատների Մօտ Կեղ Կը Փակուեն

Հայաստանի տնտեսական եւ ֆինանսական շրջանակներում ակտիւ խօսակցութիւններ են շրջանառուում, որ առաջիկայում Հայաստանի բանկային համակարգում լուրջ տեղաշարժեր են սպասուում: Բանկերի մեծ մասը, ամենայն հաւանականութեամբ, կը վերամիաւորուեն: Հենց այս հանգամանքով էլ բացատրուում է այն իրողութիւնը, որ բանկերի մեծ մասը հրաժարուում է վարկեր, յատկապէս դրամային վարկեր տրամադրելուց: Բանկերի վերամիաւորման մասին խօսակցութիւններն սկսուեցին նախորդ տարուայ վերջին, երբ Կենտրոնական բանկը որոշում կայացրեց բարձրացնել բանկերի ընդհանուր կապիտալի նուազագոյն շեմը: Կենտրոնական բանկի խորհուրդի 2014 թուականի Դեկտեմբերի 30-ի որոշմամբ՝ ՀՀ տարածքում գործող առեւտրային բանկերի ընդհանուր կապիտալի նուազագոյն չափը 5 միլիարդ դրամից հասցուեց 30 միլիարդ դրամի:

Կապիտալի նուազագոյն չափի աւելացման պահանջը նպատակաւորուած է բանկերի միաձուլումները եւ միացումների իրականացմանը, ինչը կը հանգեցնի բանկերի խոշորացման եւ կապահովի մասշտաբի դրական էֆեկտ՝ նպատակով բանկային համակարգի կողմից աւելի որակեալ ու մատչելի բանկային ծառայութիւնների մատ-

տուցմանը եւ առողջ մրցակցային միջավայրի ձեւավորմանը»,- նշուած է ՀՀ ԿԲ պաշտօնական կայքում:

Այսինքն՝ կենտրոնական դրամատունը շատ պարզ յայտարարում է, որ բանկերի միաւորումներն անխուսափելի են լինելու:

Համաձայն հենց իրենց՝ բանկերի կողմից հրապարակուած նախորդ տարուայ հաշուետուութիւնների՝ Հայաստանում գործող 21 առեւտրային բանկերից 2013 թուականի տուեալներով (2014-ի տուեալները դեռ ամփոփուած չեն), 30 մլրդ դրամի կապիտալ ունեն ընդամէնը 5-ը: Հարց է առաջանում՝ ի՞նչ քայլեր են ձեռնարկուել մնացած բանկերը մինչեւ ԿԲ-ի կողմից սահմանուած ժամկէտը: Բնականաբար, բաները կ'սպասուեն անաշտիկայ երկու տարուամ փորձեն աւելացնել սեփական շրջանառու միջոցներն ու բանկային կապիտալը, կ'սպասուեն ամբողջապէս փակուած են լինելու գնալ միաւորման: Հայաստանի տնտեսութեան՝ այսօրուայ անհեռանկար ու ներդրումային գրաւչութեան գրոյական պայմաններում բանկային կապիտալ աւելացնելը չափազանց բարդ գործ է: Ինչ վերաբերում է հնարաւոր միաւորումներին, ապա այստեղ, բնականաբար, շատ լուրջ մրցակցութիւն եւ շահերի բախում է սպասուում:

«Չի Կարող Մի Երկու Երկրների Միջեւ» Շիրակի Մարզպետ

Աւետիսեանների ընտանիքի սպանդի արդիւնքում Գիւմրիում առաջացած լարուած իրավիճակը հանդարտեցնելու համար Յունուարի 19-ին, Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակեանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ զիւմրեցիներին կոչ արեց չտրուել հմոցիաներին եւ քաղաքում շրջանառու վարկածները հիմք չընդունել:

«Ես յոյս ունեմ եւ կոչ եմ անում զիւմրեցիներին չառաջնորուել հմոցիաներով, քանի որ թէ մեր իրաւապահները, թէ ուս իրաւապահները գործը բացայայտելու համար ամէն ինչ անում են: Էլ աւելի իրավիճակը սրել պէտք չէ: Պէտք է գոհ գնալ հմոցիաներին: Չի կարող մի ճիւղի պատճառով սեպ խրել երկու երկրների միջեւ: Վարկածներին հաւատալ պէտք չէ, այլ պէտք է թողնել հետաքննութիւնը պարզի, թէ ինչ է տեղի ունեցել», - ասաց Ֆելիքս Յոլակեանը՝ նշելով, որ բոլորի խնդիրը այս պահին պարզելն է, թէ Աւետիսեանների ընտանիքը ինչու է սպանուել:

Շիրակի մարզպետի խօսքով, Գիւմրիում Յունուարի 15-ին ոս-



Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակեան

տիկանների եւ քաղաքացիների միջեւ տեղի ունեցած բախումների հետեւանքով վիրաւորների թիւը հասել է 33-ի, որոնցից 23-ը ոստիկաններ են:


«Քրէական գործ պէտք է անպայման լինի: Այլ բան է, թէ ինչ ընթացք կ'ունենայ, քանի որ կան տուժածներ: Ես այսօր իմացայ, որ տուժած ոստիկանների թիւը 5-ով աւելացել է, որոնք ստացել են ամբուլատոր բուժում եւ դուրս գրուել», - ասաց Ֆելիքս Յոլակեանը՝ նշելով, որ հիմա Գիւմրիում համեմատաբար հանդարտ է:

Երեւանի Մամուլի Ակումբի Ղեկավար «Երդողանի Հրակը Մարտահրաւէր Ե Հայաստանին»

Արդէն մի քանի տարի շարունակ Թուրքիան պատրաստուում է դիմագրաւել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներին, տեղի է ունենում Թուրքական ժխտման քաղաքականութեան կերպափոխում: Այդ մասին Յունուարի 19-ին, մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Երեւանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեանը:

Նրա խօսքով՝ Սերժ Սարգսեանին ուղղուած Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թաիփ Էրդողանի՝ Գալիպոլիի ճակատամարտի յաղթանակի 100-ամեակին նուիրուած միջոցառումներին մասնակցելու հրաւերը անհրաժեշտ է աւելի շատ դիտարկել որպէս մարտահրաւեր: «Նրանք ասում են, որ ողբերգութիւնը եղել է, սակայն զոհուել են ոչ միայն հայեր, այլեւ այլ ազգի ներկայացուցիչներ: Եւ այդ իրադարձութիւնների համար պատասխանատու է ոչ միայն Թուրքիան, այլեւ միջազգային հանրութիւնը», - նշել է Նաւասարդեանը:

Մամուլի ակումբի նախագահի համոզմամբ՝ Հայաստանը բախուել է մարտահրաւերի այն իմաստով, որ աշխարհը փաստացիօրէն պէտք է ընտրուի կատարի՝ Հայաստան, թէ՞ Թուրքիա: Եւ իհարկէ, նրանց որոշման վրայ կ'ազդի Հայաստանի եւ Թուրքիայի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Էրդողանի նկատմամբ վերաբերմունքը շատ բացասական է, սակայն ցաւոք, Հայաստանը շատերի կողմից ոչ այդքան դրակա-



Երեւանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեան

նօրէն է գնահատուում», - ասել է Բորիս Նաւասարդեանը:

Յիշեցնենք, որ Ադրբեջանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Էրդողանը յայտարարել է, թէ Գալիպոլիի ճակատամարտի 100-ամեակի առթիւ Ապրիլի 24-ին կը լինեն միջոցառումներ եւ Թուրքիա կը հրաւիրուեն աշխարհի տարբեր երկրների առաջնորդներ: Սերժ Սարգսեանը պատասխանել է միջոցառումներ մասնակցելու էրդողանի նամակին: Նախագահի նամակում, մասնաւորապէս, ընդգծուում է. «Դեռեւս մի քանի ամիս առաջ հրաւիրել եմ Ձեզ Երեւան՝ 2015 թուականի Ապրիլի 24-ին միասին յարգելու Հայոց ցեղասպանութեան անմեղ նահատակների յիշատակը: Մեզ մօտ ընդունուած է հիւրընկալուել հրաւիրողին՝ առանց սեփական հրաւերի պատասխանը ստանալու»:

Թուրք Եւ Քուրդ Լրագրողները Երեւանում Մասնակցեցին Հրանդ Տինքի Յիշատակի Քայլերին

«Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի մահուան 8-րդ տարելիցի կապակցութեամբ Յունուարի 19-ին, մօտ երկու տասնեակ մարդիկ «Ծիծեռնակաբերդ» յուշահամալիրից լուս քայլերով գնացին Ազատութեան հրապարակ:

Նախաձեռնութեան հեղինակ, «Հրանդ Տինքի» հիմնադրամի անդամ Սիւզան Մեյրեմ Ռոսիտայի խօսքով՝ այս ակցիայով իրենք նաեւ արդարութեան պահանջ են ներկայացնում Թուրքիայի կառավարութեանը, իսկ քայլերի երթուղին պատահական չէ ընտրուած:

«Յեղասպանութեան ճանչումը հաւանաբար նաեւ մէկ այլ ճանապարհ է երկխօսութիւն սկսելու եւ համագործակցելու համար: Յեղասպանութիւնը հայերի եւ թուրքերի միջեւ շարաբերութիւնների աւարտն էր, իսկ ճանաչումը նոր համագործակցութեան սկիզբ կը դնի: Ահա թէ ինչու որոշեցինք սկսել այստեղից եւ ուղեւորուել դէպի Ազատութեան հրապարակ, որը 1965թ. լուս-թիւնը խախտելու համար կարեւոր հարթակ դարձաւ», - NEWS.am-ի

հետ գրոյցում ասաց Սիւզան Մեյրեմ Ռոսիտան:

Նրա խօսքով՝ Հրանդ Տինքի սպանութիւնը առիթ դարձաւ, որ Թուրքիայում աւելի շատ խօսեն Յեղասպանութեան մասին:

«Հրանդ Տինքի սպանութիւնից յետոյ մարդիկ դուրս են գալիս փողոց եւ արդարութիւն են պահանջում ոչ միայն Հրանդի, այլեւ Եղեռնի զոհերի համար: Նրա սպանութիւնից յետոյ շատ բան է փոխուել Թուրքիայում: Ինձ համար հաճելի է գտնուել Երեւանում եւ «Ծիծեռնակաբերդի» յուշահամալիրից լուս երթով քայլել դէպի Ազատութեան հրապարակ եւ մտորել Հրանդի մասին, թէ որքան է նա փոխել մեզ եւ Թուրքիան: Ինձ համար աղօթքի պէս մի բան է Հրանդի յիշատակին նուիրուած երթը», - ասաց նա՝ ընդգծելով, որ Յեղասպանութիւնը դեռեւս շարունակուում է Թուրքիայում, քանի դեռ Հրանդ Տինքի նման խաղաղ քաղաքացիները սպանուում են հայ լինելու պատճառով:

«Բարգաւաճ Հայաստան» Կուսակցութիւնը Յետաձգել Ե Խորհրդաժողովը

Յունուարի 20-ին, պէտք է կայանար ոչ իշխանական քաղաքական-հասարակական ուժերի խորհրդաժողովը, սակայն, փոքրիկ Սերյոժա Աւետիսեանի մահունէ ետք յառաջացած վիշտին պատճառաւ խորհրդաժողովի կազմկոմիտէն որոշում կայացրեց՝ յետաձգել խորհրդաժողովի աշխատանքները:

Միեւնոյն ժամանակ կազմկոմիտէն, համաձայնեցնելով նախաձեռնութեան հեղինակ Գագիկ Ծա-

ռուկեանի հետ, վստահեցնում է, որ խորհրդաժողովը մօտ օրերս անպայման կայանալու է, որովհետեւ երկրում կուտակուած բազմաթիւ հարցեր, մարտահրաւերներ պահանջում են հրատապ, ճիշդ գնահատականներ եւ հանգուցալուծում: Այս խորհրդաժողովը ոչ միայն մտահոգութիւնների հարթակ է, այլեւ յստակ առաջարկութիւնների եւ լուծումների, ինչի ակնատեսը մենք անպայման կը

լինենք մօտ ժամանակներս: Կազմկոմիտէն ակնկալում է, որ խորհրդաժողովի հարիւրաւոր հրաւիրուածներն ըմբռնումով կը

մօտենան այս որոշմանը, եւ յայտնում, որ անցկացման նոր ժամկէտի մասին տեղեկատուութիւն կը տրուի մօտ օրերին»:

# ԼՈՒՐԵՐ

## Հայոց Ցեղասպանութեան Գնահատմանը Կողմ Է Թուրքերի 9.1 Տոկոսը

Թուրքիայում անցկացված հանրային հարցումների համաձայն, ընդամենը 9.1 տոկոսն է գտնում, որ Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը եւ ներողություն խնդրի, եւս 9 տոկոսը կարծում է, որ Թուրքիան պետք է ներողություն խնդրի, բայց հայերի ցեղասպանությունը չճանաչի:

Հարցումների 12 տոկոսի կարծիքով, Թուրքիան պետք է փոխանակ լինի 1915 թվականին զոհված հայերի համար, բայց ներողություն չպետք է խնդրի:

23 տոկոսը գտնում է, որ 1915 թվականին միայն հայեր չեն զոհվել, եւ Թուրքիայի կառավարությունը պետք է փոխանակ լինի ոչ միայն հայերի, այլեւ օսմանեան բոլոր քաղաքացիների կեանքի կորստի համար:

21 տոկոսի կարծիքով՝ ոչինչ պետք չէ անել:

Հարցումները 2014 թվականի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին անցկացրել է Տնտեսական եւ արտաքին քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնը (EDAM), որի գրասենեակը գտնվում է Ստամբուլում: Հարցումներին մասնակցել է 1508 մարդ:

Տնտեսական եւ արտաքին քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնը նույն հար-

ցերով դիմել է նաեւ արտաքին քաղաքականության 150 փորձագետներին: Նրանց պատասխաններում ամենախառն տարբերությունն այն է, որ փորձագետների ընդամենը մեկ տոկոսն է գտնում, որ ոչինչ պետք չէ անել:

Փորձագետների մեջ զգալիորեն շատ են հայերի ցեղասպանությունը ճանաչելու եւ ներողություն խնդրելու աջակիցները՝ գրեթե 19 տոկոսն այդ կարծիքն է յայտնել, 26 տոկոսի կարծիքով՝ ներողություն բաւարար է՝ պետք է ներողություն խնդրել առանց ուրիշ քայլեր կատարելու, 17 տոկոսի կարծիքով՝ փոխանակ լինի 1915 թվականին զոհված հայերի, իսկ աւելի քան 36.5 տոկոսի կարծիքով՝ 1915 թվականին միայն հայեր չեն զոհվել, եւ պետք է փոխանակ լինի բոլոր զոհվածների համար:

«Ֆրանս Փրես» լրատու գործակալությունը այս հարցումներին համառոտ տուեալներ ներկայացնելով նշում է, որ Թուրքիան մերժում է հայերի ցեղասպանությունը ճանաչելու կոչերը՝ պնդելով, որ աւելի քան կես միլիոն հայեր մահացել են պատերազմական գործողությունների եւ սովի պատճառով այն բանից յետոյ երբ անցել են ուսումնական զորքերի կողմը, եւ որ այդ իրադարձություններում թուրքերը եւս զոհեր են տուել:

## The Guardian. «Ռուբլու Անկումը Սպառնում է 9 Երկրների, Այդ Թումը՝ ՀՀ Տնտեսութեանը»

Ռուբլու անկումը լուրջ սպառնալիք է Ռուսաստանում աշխատող իրենց քաղաքացիների դրամական փոխանցումներից կախում ունեցող ինը երկրների տնտեսությունների համար, գրում է Բրիտանական «Տի Կարտիեր» թերթը:

Թերթը, վկայակոչելով Համաշխարհային բանկի տուեալները, յայտնում է, որ ընդհանուր առմամբ այդ երկրները կարող են 10 մլրդ դոլար կորցնել 2015 թվականին:

Տնտեսական դժուարությունների լուրջ ներքոյ նախկին խորհրդային հանրապետություններից գնացած շատ միգրանտներ մտածում են Ռուսաստանը լքելու մասին, նշում է The Guardian-ը:

Բրիտանական թերթը յաւելում է, որ այդ երկրներից մի քանիսում ուղբեր անկումը կարող է քաղաքական ճգնաժամ հրահրել:

Տարածաշրջանի տնտեսությունները սերտորեն փոխկապակցված են, եւ ուսումնական ուղբերը արժեզրկում են ներգործությունն է ունենում ՌԴ-ի հարեւանների արժույթների վրայ, գրում է The Guardian-ը՝ յաւելելով, որ ուղբերը

փլուզումը, մասնավորապէս, արդէն յանգեցրել է Թուրքիայի արժույթի արժեզրկմանը եւ կարող է դազարխտանեան տեղերի հետագայ արժեզրկումն ան պատճառ դառնալ, փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»:

Ըստ Համաշխարհային բանկի տուեալների՝ դրամական փոխանցումներից է կախուած ՀՀ տնտեսության՝ 21, Վրաստանի տնտեսության՝ 12, Ղրղզստանի տնտեսության՝ 31,5, Մոլդովայի տնտեսության՝ 25, Տաճիկստանի տնտեսության՝ 42, Ուկրաինայի տնտեսության՝ 5,5, Լիւվայի տնտեսության՝ 4,5, Ադրբեջանի տնտեսության՝ 2,5, Ուզբեկստանի տնտեսության 12 տոկոսը: The Guardian-ը նշում է, որ այդ երկրների ստացած դրամական փոխանցումների մեծ մասը հենց Ռուսաստանի գոց է կատարում:

2014 թ. Դեկտեմբերի կէսերին համաշխարհային գլխավոր արտարժույթների նկատմամբ ուղբերը փոխարժէքի աստիճանական նուստումից յետոյ փլուզում տեղի ունեցաւ. երկու օրում ուղբերն արժեզրկուեց 17%-ով, ինչը չէր եղել՝ սկսած 1998 թ.-ից:

## Բլերը Ստիպուած Է Բացատրել Որքան Է Վճարուել Արբեջանին Խորհուրդներ Տալու Համար

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի քննարկմանը կը ներկայացուեն օտարերկրեայ երկրներին մատուցած ծառայությունների դիմած ստացուած երկրի նախկին վարչապետ Թոնի Բլերի եկամուտների թափանցիկության հետ կապուած հարցերը: Թոնի Բլերը ստիպուած կը լինի բացատրել, թէ ինչպէս է գումար վաստակել այլ երկրների խորհրդականի պաշտօնում:

Ինչպէս հարցուողն է բրիտանական «The Independent»-ը, պահ-

պանողականների նախաձեռնությունները կը քննարկուեն մարդու իրաւունքների ոլորտում կասկածելի հեղինակութիւն ունեցող երկրներից, ինչպիսիք են Ադրբեջանն ու Ղազախստանը, նախկին վարչապետի՝ որպէս միջնորդավճար ստացուած եկամուտները:

Բացի այդ, որոշ տեղեկութիւնների համաձայն, Բլերը տարեկան 7 մլն վճարի դիմաց խորհուրդներ է տուել Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեին:

## Յունուար Ամսուայ Սկզբից Հայկական Կողմն Արդէն Ութ Զոհ Է Ունեցել

Յունուար 21-ին շփման գծում կրկին հայ զինծառայող է զոհուել: Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակից յայտնում են ադրբեջանական կողմից իրականացուած հերթական դիւերսիոն ներթափանցման փորձի մասին:

Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, զիշերը ժամը 3-ի սահմաններում Քարվաճառի ուղղութեամբ ադրբեջանական կողմի ձեռնարկած դիւերսիոն գործողութեան ընթացքում մարտ է ծաւալուել, որի ժամանակ զոհուել է 32-ամեայ Նահապետ Ասատրեանը: 1973 թվականին ծնուած Յովհաննէս Գասպարեանը վիրաւորում է ստացել: Հաղորդում է, որ հակառակորդը կորուստներ կրելով նահանջել է:

Յունուար ամսուայ սկզբից հայկական կողմն արդէն ութ զոհ է ունեցել՝ եթէ զինծառայող եւ 80-ամեայ մի հովիւ: Մօտ մէկ շաբաթ առաջ Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը ներկայացրեց նախարարութեան եթէ կէտից բաղկացած հրամանը, որով հրամանատարներն որոշ ղէպերում նախարարակ լինելու ազատութիւն տուեց: Լեռնային Ղարաբաղի նախագահի մամուլի քարտուղար Դաւիթ

Բաբեանը նշում է, որ հակառակորդը խուճապ առաջացնելու համար դիմում է ծայրայեղ քայլերի:

«Հակառակորդը իր խախտումներով փորձում է ահաբեկել ժողովրդին: Նման քայլերի է դիմում, որպէսզի ժողովուրդը վախենայ: Բայց այդպիսի բան տեղի չի ունենայ, հակառակորդի բոլոր փորձերը լինելու են սպարդիւն: Այլեւեան կլանը որդեգրել է շատ իւրաքայտուկ ազրեսիւ քաղաքականութիւն, եւ փաստօրէն զինադադարի ուեթիմը խախտուած է Արցախի եւ Հայաստանի սահմաններ իրկայնքով, բայց նոյնանման խախտումներ, չարաչարումներ, իհարկէ, քաղաքական, տնտեսական դաշտում իրականացնում է նաեւ իր սեփական ժողովրդի հանդէպ», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Բաբեանը:

Պաշտօնական Բաբուն զոհերի կամ վիրաւորների մասին տեղեկութիւն չի հաղորդում: Հայաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը պնդում է, որ Ադրբեջանը լիովին կասեցրել է սեփական գիտուած ուեթերին վերաբերող ցանկացած բացասական հրապարակում՝ սահմանափակելով տեղեկատուութեան տարածումը:

## «The Independent». Հայկական Հոլոքոստը Թաքցնելու Թուրքիայի Ամօթալի Փորձը

NEWS.am-ը գգալի կրճատումներով ներկայացնում է լրագրող Ռոբէրտ Ֆիսկի յօդուածը, որը հրատարակուել է «The Independent» թերթում:

Երբ համաշխարհային առաջնորդները, այդ թւում արքայազն Չարլզը, Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի վարչապետները, Թուրքիայի կառավարութեան հրահրով Ապրիլին կը հաւաքուեն Պալիպոլիում՝ ի յիշատակ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած ճակատամարտի, 1,5 մլն սպանուած հայերի ուրուականները կ'ուղեկցեն նրանց:

Դա դիւանագիտական յիմարութեան աննախադէպ գործողութիւն է: Թուրքիան նախատեսում է օգտագործել 1915 թվականին դաշնակիցների ներխուժման փորձի 100-ամեակը, որպէսզի խեղդի իր կողմից Օսմանեան կայսրութիւնում հայերի զանգուածային սպանութիւնների զոհերի յիշատակը: Այդ կոտորածները XX դարի առաջին կիսարդիւնաբերական Հոլոքոստն էին: Թուրքերն արդէն 102 երկրներին հրահր են ուղարկել Գալիպոլիի իրադարձութիւններին նուիրուած արարողութեանը մասնակցելու համար, որը տեղի կունենայ Ապրիլի 24-ին, նոյն օրը, երբ Հայաստանն իր յարգանքի տուրքն է մատուցում Հայոց ցեղասպանութեան զոհերին:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ էրդողանը, նախաձեռնութիւն դրսեւորելով, հրահրել է նաեւ ՀՀ նախագահին շատ լաւ իմանալով, որ այն կը մերժուի: Դրանից առաջ ինքն էր հրահր ստացել ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանից, նոյն օրը մասնակցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի արարողութեանը:

Սա պարզապէս դիւանագիտական չարաճճութիւն է: Թուրքերը շատ լաւ հասկանում են, որ Գալիպոլիում դաշնակիցների մուտքը եղել է Ապրիլի 25-ին, մէկ օր անց այն օրից, երբ հայերը յիշա-

տակում են Հայոց ցեղասպանութիւնը, որը պատուիրուել ու իրականացուել է Օսմանեան Թուրքիայի կառավարութեան կողմից:

Դեռեւս երկու տարի առաջ այն ժամանակուայ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը Մեծ ճակատամարտի 98-ամեակը նշեց 2013-ի Մարտի 18-ին, այն օրը, երբ սկսուեցին Բրիտանիայի օդուժի կողմից թերակղզու ումբակոծումները Դարդանելի նեղուցում: Այն ժամանակ Թուրքիայում ոչ ոք չէր ենթադրում, որ Գալիպոլիի կամ Չանաքքալէի իրադարձութիւնները թուրքական ձեւով յիշատակելու են Ապրիլի 24-ին:

Թուրքերն, իհարկէ, վախենում են, որ 1915-ը կը յիշուի որպէս իրենց երկրի կողմից մարդկութեան դէմ ուղղուած սարսափելի յանցագործութեան տարեթիւ, երբ տասնեակ հազարաւոր տղամարդիկ սպանուեցին գէնքով ու դանակներով, կանայք բռնաբարուեցին, իսկ յետոյ մահացան սովից իրենց երեխաների հետ միասին դէպի Միջագետք գաղթի ճանապարհին:

Այս պատմութիւնը այդ նոյն սպանութեան դաշտերը ժառանգութիւն է տուել «ցեղասպան» բանակին՝ «Իսլամական պետութեանը», որի գորհայինները աւերել են հայկական եկեղեցիներ՝ կառուցուած ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան զոհերի:

Հայերը ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր են ընտրել Ապրիլի 24-ը, քանի որ այդ օրը թուրք ոստիկանները սկսեցին Ստամբուլում ձերբակալել հայ մտաւորականներին, իրաւաբաններին, բժիշկներին, ուսուցիչներին ու լրագրողներին:

Ինչպէս Գերմանիայի ուեթիմիտ պատմաբանները հերքում են հրեաների Հոլոքոստը, այնպէս էլ Թուրքիան միշտ մերժել է իր վրայ վերցնել Օսմանեան կայսրութեան կողմից ստանալուած մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութեան պատասխանատուութիւնը, որը տեղի է ունեցել 1914-18 թվականներին:

## ՄԵՐ ՈՒՂԵՑՈՅՑԸ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ ԼԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ 86-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

Գաղափարախօսութիւնները ուղղութիւններ են՝ համամարդկային, ազգային, ընկերային, հոգեւոր եւ այլ նպատակներու առաջնորդող:

Գաղափարախօսութիւնները սերունդները դաստիարակող, կերտող ու կոփող բարոյական դարբնոցներ են՝ երիտասարդութիւնը առինքնող:

Գաղափարախօսութիւնները միա ու արիւն կը դառնան երբ կրնան ոգեշնչել փթթող երիտասարդները եւ գօտեպնդել գաղափարապէս տոգորուն գանգուածները:

Առանց ճանապարհ բացող ռազմիրաներու, ուղի հարթող դեկավարներու եւ գոհաբերող առաջնորդներու գաղափարախօսութիւնները աստիճանաբար կը գունաթափին եւ կը միախառնուին պատմութեան փոշիներուն:

Ընկեր Սարգիս Տիրունի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան այն ղեկավարներէն էր, որ իր պայքարով լեցուն կեանքը, խօսքն ու գործը, հաւատքն ու կենցաղը վերածեց ինքնատիպ դպրոցի՝ հանդիսանալով անգուգական ուղեցոյցը հնչակեան շարքին թէ անոր նորածիլ շառաւիղներուն, համակրական շրջանակին թէ հայրենասէր հաւաքակառուցութեան:

Մեր ուղեցոյցը՝ ուսուցիչ, գործիչ ու նահատակ ընկեր Սարգիս Տիրունի պատգամեց համամարդկային, ազգային եւ ընկերային էական դասեր: Այդ դասերը հիմնաքարերն են այն դաւանանքին՝ որուն միացած ու հաւատացած էր հոգեւոր ու գաղափարախօս Ս. Տիրունի:

Համամարդկային առումով՝ անոր պատգամին ելակէտը մարդասիրութիւնն է: Մարդը՝ որպէս ամենահիմնական արժէք՝ անոր տարրական իրաւունքները, արդարութիւնը եւ մարդկային փոխյարգանքը հիմերն են առողջ եւ արդիւնաւէտ միջավայրի գոյառման: Երբ Ս. Տիրունին կը պայքարէր նաեւ արաբ ժողովուրդի ազատութեան ի խնդիր՝ ընդդէմ ֆրանսական գաղութատիրութեան, կը հաւատար որ ժողովուրդներ կրնան ծաղկիլ ու բարգաւաճիլ լոկ ազատութեան պայմաններուն: Ազգամիջեան խտրութիւնը, արհեստածին եւ շինծու ատելութիւնները, ժողովուրդներու շահագործումը կը խաթարեն մարդավայել կեանքի բաղձալի մթնոլորտը: Լիարժէք ընկերվարականի բարձր գիտակցութեամբ ան ընդդիմացաւ ցեղային հակառակութիւններ սերմանող յետադիմութեանց: Քաջ գիտէր որ ամէն մոլորութիւն վնասակար է հասարակութեան եւ յատկապէս կրօնական, ցեղային եւ ազգային մոլորութիւնները անյարիր են ընկերվարութեան եւ մարդկային յառաջդիմութեան: Այսպիսի յանդուգն քարոզչութեան պատճառով իսկ թիրախ դարձաւ գաղութատիրութեան գործակալներուն, ձերբակալուեցաւ, հալածուեցաւ, աքսորուեցաւ Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ՝ վերջիվերջոյ արնաշաղախ ինչալու համար:

Ազգային առումով այնպիսի հայրենասէր էր ան, որ կառչած էր հայրենասիրութեան վսեմ գաղափարականին: «Հոն, Արարատի փէշերուն պիտի գարնենք մեր վրանները» թեւաւոր խօսքը գաղթահա-



յութեան մտասեւեռումը դէպի բռնագրաւեալ հայրենիք ուղղելն էր անկասկած: Խորհրդային Հասարակական Իրականութիւնը ան ընկալեց ե՛ւ որպէս ազգային անփոխարինելի կուռն ե՛ւ գաղափարական անասանելի գրաւական այն պահուն՝ երբ շատեր իրենց թիկունքը հակախորհրդային պրոքին յենած կը խժքժէին ու կը փնտվէին գայն: Հայրենասիրութիւնը եղաւ իր էութենէն անտրոհելի, ինչպէս իր բոլոր կուսակիցներուն համար եւս: Ազգային նուիրական արժէքներ էին հողն ու հայրենիքը, որ ինչպիսին ալ ըլլար հոն տիրող վարչաձեւը, կը մնար յուսատու եւ լուսատու փայրոս ողջ հայութեան համար: Ա՛յս ոգին կտակեց ան, ա՛յս սորվեցանք Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան փաղանգներուն մէջ: Կը մնանք փարած եւ հպարտ այս ուղղութեան եւ պատգամին:

Ընկերային պայքարի առումով ան մնաց ճնշեալ եւ իրաւագուրկ դասակարգին ջերմ պաշտպան: Ընկերային արդարութեան գուպարը այն մարտահրաւէրն էր, որ դիմակալեց վեհանձնօրէն: Ան որպէս համոզուած սոցիալիստ, բնական դաշնակիցն էր թշուառին, չքաւորին, յափշտակեալին եւ համեստ դասակարգին: Կեղեքիչը մնաց նշաւակ՝ քանզի գիտէր որ ընկերային անհաւասարութեան չարիքը կու գայ վաշխառուին անկուշտ որկորէն եւ Դանայեան Տակաւի նմանող ազատութենէն: Աւելին՝ կեղեքիչը կը մնայ անյազուրդ այնքան ատեն, որ կեղեքեալը կարծրօրէն չէ պահանջած իր իրաւունքները: Հետեւաբար՝ Սարգիս Տիրունի իր առաքելութիւններէն մին համարեց զգաստացնել, ոգեշնչել եւ սթիմիցնել իրաւագրկեալ դասակարգը՝ յանուն իր արդար ու մարդավայել կեանքին:

Մեր գաղափարական ուղեցոյցը իր դաւանած սկզբունքներուն պատճառով աչքի փուշը դարձաւ շատերու: Եւ գայն լուեցնելու վերջին ու միակ միջոցը դաւադիր գնդակները պիտի ըլլային: 17 Յունուար 1929-ին դարանակալ երկչոտներ ստորնաբար զգետնեցին զինք՝ առ յաւատ փակելու համար մարդասէր, հայրենասէր, գաղափարանուէր հնչակեան գործիչ Սարգիս Տիրունիի ճշմարտախօս ու ազատատենչ բերանը: Անոր՝ որ բարձրաճակատ եւ վեհօրէն կը բացազանչէր ամէնուր եւ ամէն ժամ՝ «Տիրունին է՛ եւ կը մնայ հնչակեան»:

\*\*\*

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութիւնը հնչակեան

## ԵՐԲ ՑԱԲԱԼԻՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԾԻԾԱՂԵԼԻ

ՄԵՐ ՊԱՐԳԵՒԻ ԱԻԻԹԵԱՆ

Ահաբեկչութեամբ վիրաւորուած Ֆրանսայի ցաւին բաժնեկից եղաւ ամբողջ աշխարհը, որուն մեծամասնութիւն կազմող խաղաղասէր եւ ազատասէր մարդիկը դարձած են անկարող ակնատեսը քաղաքական վերիվայրումներու եւ ենթական՝ կենցաղային կաշկանդումներու, առ ի հետեւանք ափ մը փոքրամասնական ծայրայեղականներու ատելավառ արարքներուն:

Մշակոյթի եւ քաղաքակրթութեան աշխարհի մայրաքաղաք Փարիզը, որուն մէջ ծնաւ ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն դաւանող յեղափոխական երրորդութիւնը, ուր մտքի եւ գաղափարի անկաշկանդ ազատութիւնը կը թուի թէ ամէն տեղէ աւելի սուրբ է ու նուիրական, անցեալ շաբաթ դուրս եկաւ միլիոններով՝ դատաւարութեան համար հաբեկչութիւնը իր շնորհալի երգիծանկարիչներուն ու անբախտ գոհերուն: Գրիչներ եւ «Ես Շարլի եմ» (Je suis Charlie) գրութիւնը բարձրացուցած ամբոխները մեծ ՈԶ կ'ըսէին այն բոլոր մարդոց, որոնք իրենց ծայրայեղ ընթացքով լուեցնել կը ջանան ազատ խօսքը, միտքն ու գաղափարը:

Շատ ցաւալի երեւոյթ էր տեսնել գործուած ոճիրները եւ անվերապահօրէն դատաւարութիւն: Անձնական ձախողութիւններու պատճառաւ մոլորած մարդիկ, որոնք վերածնեալ (born again) կրօնականութեամբ մը կուրցած կամ գիտովցած՝ կտրուած էին իրենց շրջապատէն, եւ գուցէ իրենց նմաններուն պէս հրապուրուած էին «ճիհատեային յետմահու երազային աշխարհի մը մէջ հաճելի կեանք մը ապրելու խաբկանքով, դարձած էին գազան ու բարբարոս՝ խլելով անմեղ գոհեր, որոնց կարծես միակ յանցանքն էր ըլլալ յառաջագիտ երկրի ու կեանքի պարզ ու հասարակ քաղաքացիները: Սակայն այն ինչ որ ցաւալի էր՝ դարձաւ ծիծաղելի:

Փարիզեան բողոքի ցոյցին ներկայ էին թուրքիոյ եւ Իսրայէլի ղեկավարները՝ Տաւուսողլուն ու Նեթանիահաւուն: Այդ երկու երկիրներու ղեկավարները իրաւունք չունէին «գողնալ», կամ ինչպէս անգլերէնով կ'ըսեն steal the show, խռոված աշխարհին առջեւ տեղի ունեցող բողոքի արտայայտութիւնը եւ քալել տամեակ մը պետական ղեկավարներու շարքերուն մէջ: Աշխարհ լաւ գիտէ կամ պէտք է լաւ գիտնայ, թէ թուրքիան եւ Իսրայէլը իրենց քաղաքական գործընթացով ձեւով մը պատճառ դարձան ստեղծելու առիթներ ու վիճակներ, որոնց ուղղակի կամ անուղղակի

երիտասարդական եւ ուսանողական միաւորները մկրտելով Ս. Տիրունիի անունով (Սուրիա, Լիբանան, Հայաստան), ինքնստիքեան գայն կը վերածէ ուղեցոյց-խորհրդանիշի, որուն ահօսած ուղին եւ գաղափարական ժառանգութիւնը կը մնան անվիճարկելի նշխարներ հնչակեան նորահաս անդամներուն համար:

Ահա թէ ինչու մեր ուղեցոյցին շիրիմին շուրջ միաբուռնեց կը հաստատենք:

Հետեւեանքներէն ծնունդ առին ահաբեկիչ այդպիսի «խենթերը»: Անոնց հոն ներկայութիւնը մեզի կը յիշեցնէ «մեռելին ետեւէն քալող ոճրագործը» ասացուածքը:

Արդարեւ, Սուրիոյ յեղափոխութիւնը օգտագործող եւ անոր սահմաններէն ներս աշխարհի իսլամ կրօնամոլ «պաշտպօզուք»ները հոն ներածող թուրքիան ծնունդ տուաւ իսլամական Պետութիւն կոչուած «հնադարեան» շարժումին, որուն հետեւորդները անոր դրօշը պարզած ահաբեկեցին ու սպաննեցին ֆրանսացի երգիծանկարիչներն ու միւս անբախտ գոհերը:

Իսկ Նեթանիահաւուն, որուն ծայրայեղ քաղաքականութիւնը ծնունդ առաւ Իսրայէլի նախկին խաղաղասէր վարչապետ Իցհաք Բապիրի սպանութեամբ եւ անոր պետական անողոք ահաբեկչութիւնը պաղեստինցի ժողովուրդի արդար ազատատենչութեան դէմ անկասկած որ կը ծառայէ թոյնով եւ ատելութեամբ լեցնելու իսլամ ծայրայեղականները, ան ալ իր բաժինը ունի ահաբեկիչ այլախոհներու արտադրութեան գործին մէջ: Ցաւալի հաւաքը այդ երկուքին ներկայութեամբ դարձաւ մասամբ ծիծաղելի, բան մը՝ որ շատ լաւ կը բացատրուի հետեւեալ արաբական ասացուածքով՝ «ալ-մուտահէք ալ-մուպքի», կամ՝ «ծիծաղի համագործակցութիւն»:

Ահաբեկչութիւնը դատաւարութիւն է անշուշտ, որովհետեւ անմեղ գոհեր կը խլէ: Բայց բոլոր անոնք որոնք իրենց բռնարարքներով կամ դաւադիր քաղաքականութեամբ պատճառ կը դառնան ահաբեկիչներու արտադրութեան, իրաւունք չունին լաւեցող շարքերուն մէջ երեւնալու:

Ահաբեկուած ֆրանսացի երգիծանկարիչները մօտ անցեալի որակումով ձախակողմեաններ էին, որոնց համար մտքի եւ գրչի ազատութիւնը գերադաս կը նկատուէր ամէն տեսակի կրօնական նկատառումներով յառաջացած կաշկանդումէ: Էրտողանի եւ Նեթանիահաւուն քաղաքական ուղղութիւնը, իրենց ծայրայեղ ջրակողմեան եւ կրօնական թեքումներով, խորթ է եւ անհաշտ այն գաղափարներուն հետ, որոնց պատճառաւ գոհուեցան այդ երգիծանկարիչները:

Կրօնապաշտներու ներկայացուցիչները, էրտողանի եւ Նեթանիահաւուն պէս, կրօնամոլ իսլամ այդ ահաբեկիչներէն միայն կը տարբերին իրենց դիրքին եւ պաշտօնին բերմամբ իրենց ընծայուած ու ունեցած պետական ահաբեկչութիւն կատարելու օրինական ապահովութեամբ (absolute immunity), ինչ որ այս առթիւ կը բացատրէ թէ ինչու՞ ցաւալին կը դառնայ ծիծաղելի:

Ահա կու գանք հազարներով, քո շիրիմին ով անմահ

Հաղորդուելու սուրբ նշխարէդ, գոր մեզ թողիր յիշատակ: Ապա՛ կ'երդնունք:

Մենք պիտի քայլենք այդ ուղիով, մինչեւ վերջին հանգրուան:

Բիւր յարգանք նահատակ ընկեր Սարգիս Տիրունիի անթաւամ յիշատակին:

«ԱՐԱՐԱՏ»  
Խմբագրական

### ՄՆԱԿ ԵՒ ԴԻՄԱԴԻՐԵԼ...

#### ԼԻԼԻԹ ԱԻԱԳԵԱՆ

8 տարի՝ առանց Հրանդ Տինքի ...

Հրանդ Տինքին ընդունուած է համարել մէկը, որին յաջողուեց փոխել Թուրքիան: Սա, թոյլ եմ տալիս ինձ ենթադրել, մեծ չափազանցութիւն էր, որը Հրանդ Տինքը հերքեց 8 տարի առաջ, թիկունքից արձակուած երեք գնդակից «Ակօս»ի խմբագրատան առաջ, օրը ցերեկով, արնաշաղախ ընկած: Թէեւ տասնեակ հազարաւոր թուրքեր դուրս եկան հրապարակ՝ պատասխանելով «Մենք հայ ենք, մենք Տինք ենք»: Սակայն, խոշոր առումով, Թուրքիան, կարծես, նոյն Թուրքիան է:

Բայց այդ դէպքում նաեւ Հրանդ Տինքի անունից հարցնենք՝ իսկ Հայաստանը: Փոխուել է արդեօք Հայաստանը: Գուցէ դարձել է համայն հայութեան համար բնակութեան ամենապահիվ, ամենավստահելի վայրը:

«Ո՛չ», վստահաբար մտածում են շատ-շատերը: Այդ դէպքում հարցը ձեւակերպենք այսպէս՝ «Փոխուել ենք մենք, հայերս» ... Ինչո՞ւ են այսօր Հայաստանից հայերը հեռանում այլ երկրներ: Իշխանութիւնները լեզուի մէջ են, կողոնմպացուած են: Գուցէ հայերն աշխարհով մէկ են սփռուում՝ իրենց հայրենիքում կորցրած արդարութիւնն ինչ-որտեղ, այլ երկրում գտնելու երազանքով:

Լսել էք հաւանաբար. «Կեանքը մէկն է, եւ ինչո՞ւ պէտք է ողջ կեանքն անցկացնենք անարդարութեան դէմ պայքարելով, ու մի օր յանկարծ նկատենք, որ կեանքն անցաւ, ու մենք ոչինչ հասկացանք»: Չես վիճարկի՝ հիմնաւոր ու հասկանալի միտք է: Եթէ միայն կարողանանք յստակ ձեւակերպել, թէ ինչ է նշանա - կում «կեանք» եւ ինչ է նշանակում «պարել»: Ո՞րն է իւրաքանչիւրիս պատասխանատուութիւնը անարդարութիւնների, մեր հայրենիքին նետուած արտաքին ու ներքին մարտահրաշխանների համար: Երկիրը լքելը: Կամ դժգոհելը, որ Հայաստանում արդարութիւն ու օրէնք չի աշխատում, հետեւաբար մենք այնտեղ անելիք չունենք:

Գիւմրիում Յունուարի լոյս 12-ի գիշերը կատարուած սարսափելի ոճրագործութիւնից յետոյ, երբ քնած ընտանիքի 6 անդամները սպաննուեցին Գիւմրիում տեղակայուած ռուսական 102 ռազմական զինուորի ավտոմատով, իսկ սուխուհարուած վեցամեայ փոքրիկը դեռ կեանքի ու մահու

կուր է տալիս, այնքան զգացում էր մտածող, սրտացաւ ու նուիրուած մարդկանց պակասը: Որովհետեւ Գիւմրիում ռուս մարդասպանին հայ իրաւապահներին յանձնելու պահանջով փողոց դուրս եկած մեր հայրենակիցների թիւը թէեւ շատ էր, սակայն աւելի շատ էին ոստիկանները: Իսկ թէ ինչո՞ւ, պատասխանը կարող էք գտնել Հայաստանի դեմոկրատիկ վիճակի մասին պատմող վիճակագրական թուերում: Եւ նաեւ Տինքի այս տողում. «Ես այնպիսին չեմ, ինչպէս շատ հայեր, որոնք վտանգաւոր իրավիճակներում նախընտրում են իրենց գլուխները թաքցնել» ...:

Այս օրերին, երբ բոլորս յատկապէս ենք յիշում Հրանդ Տինքին, կարող ենք պատկերացնել, որ նա կը թողնէր իր բաժին պատասխանատուութիւնն այն երկրում, որտեղ ծնուել ու մեծացել էր, ու կը հեռանար աւելի ապահով երկրներ: Պայքարից, պատասխանատուութիւնից հեռանալը իւրաքանչիւրի իրաւունքն է, եւ դրա համար չկայ ոչ մի պատիժ ո՛չ քրէական, ո՛չ քաղաքացիական օրէնսգրքում: Այդ դէպքում ինչո՞ւ ենք այսօր, անգամ Հրանդ Տինքի սպանութիւնից 8 տարի անց, այնքան զգում նրա քաղաքացիութիւնը եւ ինչո՞ւ էր յատկապէս հիմա այնքան անհրաժեշտ նրա ներկայութիւնը:

Մե՞զ՝ հայերի՞ս, պէտք է ասել, թէ ինչ է նշանակում հայի համար ապրել Թուրքիայում, ուր ինքնութիւնդ պահելու խնդիրը բարդ է, ոչ միայն լեզուդ, մշակույթդ, կրօնդ պահելու առումով: Եւ որքան դժուար էր դա յատկապէս Հրանդ Տինքի համար: Որքան ճակատագրական դարձաւ Տինքի 2002-ին Ուրֆայում, կոնֆեւրանսին արտասանած միտքը. «Թուրք չեմ, այլ Թուրքիա չի հայ եմ»...:

Դատական անվերջ հետապնդումներ, ազատագրկամ վտանգ, համակարգչի յիշողութեան մէջ պահպանուած բազմաթիւ սպառնալիքներ: Բայց, միեւնոյն է, իր բոլոր յօդուածներում Տինքը չափազանց կարեւորում էր պայքարը տեղում, անմիջապէս ռազմի դաշտում եւ ոչ երբեք այնպիսի հեռավորութեան վրայ, ուր փամփուշտը քեզ հասնել չի կարող: Իր ամենագրեցիկ յօդուածներից մէկում եւս՝ «Հոգեվիճակ վախուորած աղանու է նման», նա անդրադառնում է իր ծննդավայրից՝ Թուրքիայից, հեռանալու եւ պայքարը այլ երկիր տեղափոխելու անհնարնութեանը. «Դժոխքի կրակները թողած՝ պատրաստի դրախտում» հանգրուանելը չէր հա-



մապատասխանում իմ էութեանը:

Մենք դժոխքը դրախտի վերածելու յաւակնութեան տէր էինք: Թուրքիայում մնալը ե՛ւ մեր իսկ ցանկութիւնն է, ե՛ւ յարգանքից բխող անհրաժեշտութիւն ծանօթանձանօթ այն հազարաւոր մարդկանց նկատմամբ, ովքեր Թուրքիայում ժողովրդավարութեան պայքար են մղում ու թիկունք կանգնում մեզ»:

Այսօր, երբ մեր հայրենակիցներից շատերը խուճապահար այս ու այն երկիր են փախչում՝ Հայաստանի ճակատագրի պատասխանատուութիւնը թողնելով Հայաստանում ապրող հայերի վրայ, յիշում եմ Հրանդ Տինքի պատասխանը ռուս լրագրողի հարցին, թէ այդքան հետապնդումներից յետոյ ինչո՞ւ Տինքը չի լքում երկիրը. «Ախ, գոնէ Դո՛ւք մի խօսէք այդ թեմա չով: Բաւական է, որ ես դա անընդհատ լսում եմ ընկերներիցս:

Ես ցանկանում եմ պայքարս շարունակել այստեղ/ Թուրքիայում-Լ.Ա./: Չէ՞ որ դա միայն իմ պայքարը չէ: Սա բոլոր նրանց պայքարն է, ովքեր ձգտում են Թուրքիայի ժողովրդավարացմանը: Եթէ ես յանձնուեմ ու լքեմ երկիրը, սա մեծ ամօթ կը լինի բոլորի համար: Այս երկրում ապրել են իմ նախնիները, այստեղ են իմ արմատները, եւ ես իրաւունք ունեմ մեռնելու այն երկրում, որտեղ ծնուել եմ »...

Տինքին վերագրել աւելին, քան նա արեց, անհրաժեշտ չէ. փոխել Թուրքիան կամ Թուրքիայի վերաբերմունքը Յեղասպանութեան հանդէպ, առայժմ չի յաջողում: Տինքին յաջողուեց մէկ այլ բան՝ արթուն պահել պայքարն իմաստաւորելու ցանկութիւնը, ռազմի դաշտից չփախչելու խիզախութիւն ունենալ, ճշմարտութեանը ուղիղ հայեացքով նայելու կարողութիւնը:

Ի՞նչ կ'ասէր Հրանդ Տինքն այսօր, ցեղասպանութեան 100-ամ-

եայ տարելիցին: Նա, որ անվերջ փորձում էր հասկանալ՝ ինչո՞ւ տեղի ունեցաւ սարսափելի այդ աղէտը հայ ժողովրդի հետ, ինչո՞ւ թուրքերը ոչ մի կերպ չեն կարողանում դուրս գալ բարդոյթից ու ընդունել, որ իրենց նախնիները ցեղասպանութեան են ենթարկել 1,5 միլիոն հայի, հարիւր-հազարաւորներին զրկել հայրենիքից: Ի՞նչ կ'ասէր, եթէ տեսնէր, որ ցեղասպանութիւնն՝ իր ողջ ահաւորութեամբ, արդէն ծնւալից դիտելու հնարաւորութեամբ, տեղափոխուել է 21-րդ դար: Յիշենք 2014-ի Օգոստոսին ողջ մարդկութեան աչքի առաջ ցեղասպանութեան ենթարկուեց եգիպտի ժողովուրդը:

«Հայ-թուրքական յարաբերութիւններն անհրաժեշտ է դուրս բերել 1915 մեթր խորութիւն ունեցող ջրհորից», - գրում է Տինքը: Նա վստահ էր, որ Թուրքիայում նոր սերունդը կը կարողանայ ձերբազատուել թապուներից: Դա հնարաւոր է, թէ՞ ոչ: Եւ արդեօք միայն Թուրքիան ունի ինքն իրեն գնահատելու, վերանայելու խնդիր: Ունե՞նք մենք՝ հայերս, յստակ ձեւակերպուած պահանջ թուրքիային՝ ի՞նչ ենք պատրաստ անել մենք, մեզնից իւրաքանչիւրը՝ Յեղասպանութեան ճանաչման, Հայաստանի ուժեղացման համար: Եւ, վերջապէս, Հայաստան պետութիւնը ի՞նչ է ակնկալում Թուրքիայից՝ ստակ ներողութիւն, թէ՞ ցեղասպանութեան ճանաչումը իր հետ առաջ է քաշելու քաղաքական, տնտեսական, իրաւական բազմաթիւ խնդիրներ:

Այս հարցերը Հրանդ Տինքը կարող էր ձեւակերպել ու ներկայացնել իրեն յստակ ուղղամտութեամբ ու հաւատով, որ երկու՝ պատմականորէն թշնամացած ժողովուրդները, ի վերջոյ, դատապարտուած են երկխօսելու՝ կոտրելով բոլոր թապուները:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրածնող է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՄԱՐՈՒԱՆ ՑՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ «ՀՐԱՆԴ ՏԻՆՔԸ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՐԹԻՆ ԼՈՒՏԵՐ ՔԻՆԿՆ ԷՐ»



Կիրակի, Յունուար 18, 2015, խոսուներամ բազմութիւն մը փութացած էր Պոլսահայ Միութեան սրահը, ուր տեղի ունեցաւ յուշերեկոյ մը, նուիրուած Պոլսոյ «Ակօ» թերթի խմբագիր Հրանդ Տինքի նահատակութեան ճրդ տարելիցին: Ներկայ էին գաղութիս տարբեր յարանուանութիւններու եւ աւանդական երեք կուսակցութիւններու, ինչպէս նաեւ 60 կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Բեմին վրայ զետեղուած էր նահատակ Հրանդի մեծադիր լուսանկարը: Պոլսահայ Միութեան Մշակութային յանձնախումբի ատենապետ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան իր բացման խօսքին մէջ ողջունել էր քանի որ ներկայ հասարակութիւնը ոգեկոչեց յիշատակը

արդարութեան եւ մարդկային իրաւունքներու խիզախ պաշտպան Հրանդ Տինքին: Ապա մէկ վայրկեան յոտընկալս յարգուեցաւ յիշատակը տարաբախտ հայ նահատակին, որուն անմիջապէս հետեւեցաւ հոգեհանգստեան արարողութիւն մը, մասնակցութեամբ հայ եկեղեցականներու:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Հարաւային Գալիֆորնիոյ (USC) համալսարանի քաղաքական գիտութիւններու ամպրոնի եւ նոյն համալսարանի Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեանց հիմնարկի հիմնադիր եւ տնօրէն փրոֆ. Հրայր Տէքմէճեան: Յարգելի զեկուցաբերը համեմատութիւն մը կատարեց այս երկրի ազատ խօսքի, արդարութեան եւ մարդու իրաւունքներու ջերմ պաշտպան նահատակին:

### ԸՆԿ. ՏՕՔԹ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆ «ՄԱՍԻՍ»Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ

Հաճելի անակնկալ մըն էր Լիբանանէն ընկ. Տօքթ. Մկրտիչ Պետրոսեանի տուած այցելութիւնը «ՄԱՍԻՍ» շաբաթաթերթին, Շաբթ 10 Յունուար 2015 կ.ա. ժամը 10-ին: Յարգելի Բժիշկը, անձնական հանգամանքով ժամանած էր Լոս Անճելըս, իր անմիջական հարազատներուն հետ տօնախմբելու համար Ամանորեան տօնը:

Յարգելի Բժիշկը Հայկական Կրթական Բարեսիրական Միութենէն ներս վարչական գործօն եւ նուիրեալ անդամներէն մին է, մաս կը կազմէ Լիբանանի Շրջանի Ս.Գ. Հ. Կ.-ի վարիչ մարմնին եւ Բժշկապետն է Ազունիէյի հայապատկան հիւանդանոցին:

Տօքթ. Մ. Պետրոսեան շնորհաւորել է նորանոր յաջողութիւններ մաղթել էր «Մասիս»ի խմբագրական կազմին Ամանորի բարեբաատիկ առիթով, բարձր գնահատեց շաբաթաթերթի գաղափարական, ազգային եւ հայրենասիրական առաքելութիւնը: Ան անդրադարձաւ Յեղասպանութեան հարիւրամեակի կապակցութեամբ լիբանանահայ ազգային կառուցներուն տարած միասնական աշխատանքներուն մասին, գոր նկատեց գնահատելի: Ան, նաեւ ծանրացաւ ընդհանրապէս Լիբանանի դիմագրաւած ապահովական եւ տնտեսական պայմաններուն մասին, վստահեցնելով, որ անոնք կրնան բարելաւուիլ շնորհիւ պետութեան վարած լրջախոս եւ իմաստուն քաղաքականութեան:

«Մասիս»ի խմբագրութիւնը շնորհակալութիւն յայտնեց իր գաղափարակիր ընկերոջ այցելութեան համար, մաղթելով քաջառողջութիւն, յաջողութիւն եւ բարի վերադարձ դէպի Լիբանան:

Արսէն Կիտուրի Յուշերը լոյս կը արձակէ Մեծ Եղեռնի այն դէպքերուն եւ դէմքերուն վրայ, որոնց մասին շատ քիչ բան գրուած է: Այս ուղղութեամբ նկատի ունինք նաեւ վայրին՝ Պաղտատի աշխարհագրական դիրքը, ինչպէս նաեւ թրքական հարածանքներու եւ վայրագութեանց տեսակը, նկատի առնելով իթթիհատի իւրաքանչեւ գործելակերպը քաղաքին մէջ: Թուրքերը Պաղտատի հայերը զանգուածային բռնագաղթի չեն ենթարկած, սակայն ամէն տեսակի հարածանք եւ իսթիհատի ի գործ դրած են անոնց դէմ: Արսէն Կիտուրի այն ազգային տիպարն է, որ ճիշդ չէ խնայած իր հայրենիքին ծառայելու: Ան նոյնիսկ զոհած է իր անձնականն ու ընտանեկանը, ազգայինը առաջնակարգ սեպելով: Նախ իր ծնողները ազգականներու հոգածութեան վստահելով եւ ապա իր սեփական կիներն ու զաւակը՝ աներոջ, ճամբորդած է հեռու քաղաքներ վասն ազգային պարտականութեան եւ գործին: Արսէն Կիտուրի Պաղտատի մէջ խիստ հետապնդումի ենթարկուած է թուրքերու կողմէ, բայց եւ այնպէս ան իր ուղիէն չէ շեղած եւ աննկուն կամքով իր գործը շարունակած է:

1950-ական թուականներուն Ռուբէն Տէր Մինասեանի հրատարակուած յուշերուն մէջ, մեծ կարեւորութեամբ կը յիշուի Արսէն Կիտուրի գործունէութիւնը Պաղտատի եւ շրջաններուն մէջ: 1955-ին «Այդ» օրաթերթին մէջ յօդուածներով հրատարակուած են Արսէն Կիտուրի յուշերը: Նոյն տարին «Արարատ» օրաթերթը խոհեմութիւնը ունեցած է գիրքով մը հրատարակել այդ յուշերը, գործ հեղինակին կողմէ խորագրուած է «Յուշեր Ու Փուշեր»: Գիրքը Արսէն Կիտուրի ազգային գործունէութեան մանրամասնութիւնները կը պատմէ:

1909-ին Արսէն Կիտուրի քսանմէկ տարեկան էր, երբ Պայագիտէն Կ. Պոլիս կը մեկնի ուսանելու համար Պետական Բարձրագոյն Ուսուցչանոցը, Մինաս Չերազի եւ Իգմիրլեան Պատրիարքի միջնորդութեամբ: Բարձրագոյն ուսում ստանալու նպատակը թուրքերի մէջ ապրող հայոց օգտակար դառնալ էր: Արսէն Կիտուրի 1914-ին Ուսուցչանոցը կ'աւարտէ եւ թրքական կառավարութեան կողմէ Պաղտատի Կառավարական Լիսէի մէջ ուսուցիչ կը նշանակուի պատմութեան, աշխարհագրութեան եւ գրականութեան ամպիոններուն համար: Այդ միջոցին Ա. Համաշխարհային Պատերազմը կը պայթի եւ պետութիւնը կը ստիպէ գալն գիտնորագրուելու ուրիշ մտաւորականներու հետ: Պաղտատ մեկնելու փոխարէն, Արսէն Կիտուրի Սպայից Զօրանոցը կը մտնէ: Ան իր քով կը պահէ ուսուցչութեան պաշտօնին նշանակուելու վկայագիրը, որ իրեն տուած էր կրթական տեսուչ՝ արաբ Իսմայիլ պէյ Հազարը:

1914-ին թրքական իշխանութիւնները աչքաուռ հնչակեան գործիչները կը ձերբակալէ: Անոնց քով գտնուող կարգ մը փաստաթուղթեր թուրքերուն ձեռքը կ'անցնին: Այդ փաստաթուղթերէն մէկուն մէջ կը գտնուէր Ա. Կիտուրի ստորագրութիւնը: Այդ մէկը փաստ մըն էր որ Կիտուրի Քէօթէնէն շնչակեան ժողովին մասնակցած

էր: Թուրքերը կը սկսին հետապնդել Արսէն Կիտուրը, երբ ան նոր մտած էր Սպայից Զօրանոցը:

Վերոյիշեալ պայմաններու տակ, Արսէն Կիտուրի կեանքը վտանգուած էր: Իսմայիլ պէյ Հազարը գալստեանելով, կարելի բոլոր միջոցները ի գործ դնելով, Արսէն Կիտուրի Պաղտատ մեկնելու ծրագրին յաջողութիւնը կ'ապահովէ: Ուստի Արսէն Կիտուրի շուտով ճամբայ կ'ելլէ եւ 14 օր ճամբորդելէ յետոյ, Պաղտատ կը հասնի: Ան նախքան ճամբայ ելլելը Կ. Պոլսոյ մէջ Մեծն Մուրատին (Համբարձում Պոյաճեան) կ'այցելէ եւ բանտարկուած ընկերներուն մասին մանրամասնօրէն կը տեղեկանայ:

Հետապնդուած ըլլալով թրքական իշխանութիւններու կողմէ, Արսէն Կիտուրի զգոյշ եւ շրջահայեաց էր: Պաղտատի մէջ ան լաւ կ'ուսումնասիրէ իրեն հանդիպած մարդիկը: Արաբներու հետ շատ լաւ յարաբերութիւն կը մշակէ: Անոնք թուրքերը կ'ատէին եւ կ'աշխատէին անկախութիւն ձեռք ձգել: Կը փափաքէին որ դաշնակիցները պարտութեան մատնեն թուրքիան ու Գերմանիան: Այս պատճառով, արաբները կը սիրէին Արսէն Կիտուրը: Ան շուտով հինգ հարիւր աշակերտ ունեցող Պաղտատի Սուլթանիէ դպրոցին մէջ իր պաշտօնին կ'անցնի: Դպրոցին տնօրէնը՝ էմին էֆենտին չափաւորական թուրք մըն էր եւ երբեմն կը քննադատէր թրքական իշխանութիւնները: Էմին էֆենտի դէմ էր իշխանութիւններուն՝ մտաւորականները զինուորագրելու արարքին: Դպրոցները առանց ուսուցիչի մնացած էին:

Պաշտօնավարելէ քանի մը ամիս ետք, Արսէն Կիտուրի արդէն արաբ աշակերտներուն սիրելին դարձած էր: Ան արաբական ազգային ոգիով կը լեցնէր զանոնք: Իթթիհատականները չէին ցանկարար թնայնել արաբ աշակերտներու ազգային եւ կրօնական զգացումները: Այս պատճառով, իթթիհատական իշխանութիւնը արաբներու կրթութիւնը քրիստոնէայ հայու մը վստահած էր:

Արսէն Կիտուրի արաբ աշակերտներուն ծնողներուն հետ ալ շփման մէջ էր: Բոլորն ալ կը սիրէին ու կը յարգէին զինք: Անոնք ընդհանրապէս իթթիհատական կուսակցութեան կը պատկանէին ընդդէմ իթթիհատի: Սուլթանիէ դպրոցին աւարտական դասարանի աշակերտներէն մէկը՝ Սալիտ Սուլէյման յայտնաբերած էր Արսէն Կիտուրի անցեալը: Գիտէր թէ ան հակաթուրք թուրք յեղափո-

խական մըն էր: Ուստի ան յանձն առած էր իր սիրելի ուսուցչին կեանքի պաշտպանութիւնը: Գիտէր թէ Արսէն Կիտուր կը հետապնդուի թուրքերուն կողմէ: Հետապնդման պատճառը այն էր թէ «Այդ օրերը սկսած էր լոյս տեսնել «Փոլիս Մէճմուսի» պարբերութիւնը, որուն էջերէն թոյն կը սփռուէր թուրքիոյ ամէն կողմերը, ցոյց տալով ընդհանրապէս հայերու եւ մասնաւորապէս հնչակեան «դաւադիր»ներուն հակապետական արարքները»: Արսէն Կիտուր գիշերները կը մտաբերէր բանտերուն մէջ իր ընկերներուն կրած տանջանքները: Ան իրագէկ կը դառնար օրուան անցուղարձերուն բարեկամներու եւ թերթերու միջոցով: Այդուհանդերձ Ա. Կիտուրի դասարանային պահերով կը սփռէր ինքզինք: Պերճախօսօրէն դասաւանդելով, ան աշակերտներուն սրտերուն եւ մտքերուն մէջ կը ջանար տպաւորել երեք հիմնական իրականութիւններ: Առաջինը այն է թէ թուրքը վայրենի ազգ մըն է, երկրորդը՝ թուրքը կը ճնշէ բոլոր ոչ-թուրքերը եւ երրորդը այն է թէ պէտք չէ ճիշդ խնայել թուրքին լուծը թօթափելու եւ անոր գոհը չզրանալու համար: Իսկական յեղափոխութիւն մըն էր որ Արսէն Կիտուր կը սերմանէր արաբներու մտքերուն եւ սրտերուն մէջ:

Ընթացքին մէջ, թուրքերուն կասկածները կ'աւելնային Ա. Կիտուրի անձին եւ գործունէութեան հանդէպ: Ան շատ մօտ էր թուրք եւ արաբ իթթիհատականներու՝ ընդդէմ իթթիհատականներու: Թուրք սպայ մը՝ Թէվֆիք պէյ անտուով, որ իսլամ փաշայի թիկնապահներէն մէկը եղած էր եւ մասնակցած Անդրանիկ փաշայի դէմ մղուած պատերազմներուն՝ պարսկական հողերու վրայ: Թէվֆիք տեսած էր իսլամ փաշայի պարտութիւնը: Ան մասնակցած էր հայկական գիւղերու տեղահանութեան եւ ոճիրներուն: Հայերը սաստիկ կ'ատէր: Թրքական կառավարութիւնը Սուլթանիէ դպրոցին մէջ անոր պաշտօն մը տուած էր, սակայն անոր հիմնական պարտականութիւնն էր լրտեսել:

Արսէն Կիտուր կը տեղեկանայ հայոց բռնագաղթերուն եւ սպանութիւններուն մասին: Ապրիլեան Մեծ Եղեռնը սկսած էր: Ան կը շարունակէր դասաւանդել, իր ազգային սուրբ պարտականութիւնը կատարելով: Արաբ աշակերտներուն մէջ ան կ'արթնցնէր ազգային եւ յեղափոխական ոգին:

Օր մը Քերքուք քաղաքի կառավարիչը Պաղտատ կ'այցելէ: Անոր կ'ընկերակցէր թուրք քննիչ մը Մուրատ անունով, որ աշակերտներուն գիտելիքները քննութեան ենթարկելու պաշտօնով Սուլթանիէ դպրոցը կ'այցելէ: Արսէն Կիտուրի աշակերտներէն մէկը անխոհեմութիւնը կ'ունենայ յայտնելու իր արաբական ազգային զգացումները քննիչին մէկ հարցումին պատասխանելով Հարուն էլ Ռաշիտի մասին: Այս պատասխանը պատճառ կը դառնայ որ քննիչը ուղղակի ամբաստանէ Արսէն Կիտուրը իբր յեղափոխական: Արդէն թուրքերը սաստիկ կը կասկածէին անոր գործունէութեան վրայ: Թէեւ Արսէն Կիտուր կը շփոթի պահ մը, սակայն ան լաւ գիտէր ստեղծուած պայմաններուն հետ պատշաճօրէն վարուել: Այդ օրերուն հայութիւնը իր սեւ ճակատագիրը կ'ապրէր ամէ-

նուրեք: Թրքական իշխանութիւնները Արսէն Կիտուրը իբրեւ «դաւաճան» կ'ամբաստանեն եւ զայն ձերբակալելու հրաման կու տան: Պաղտատի հայ բնակիչներէն ոմանք կը ձերբակալուին ու կը բանտարկուին իբրեւ անգլիական լրտեսներ: Կ. Պոլսոյ մէջ քսան կախաղաններով քսան հայ քաջեր կը նահատակուին: Պաղտատի հայկական գաղութին մէջ կասկածելի անձ մըն էր Յովակիմ Թանճուտեան կոչեցեալ լրտեսը, որ ազգային հայ անձնաւորութիւնները բամբասելով ու թրքական իշխանութիւններուն մատնելով իր «պարտակալութիւնը» կը կատարէր: Պաղտատի հայ ազգայինները մեծ աշխատանք կը թափէին Արսէն Կիտուրի կեանքը պաշտպանելու համար: Այդ դժնդակ պայմաններուն մասին խօսելով, Ա. Կիտուր կ'ըսէ. «Մինչ այդ՝ մահուան հետ հաշտուած էի. ընկերներս՝ Պոլիս, ես ալ թող հոս կախուիմ»: Ուրիշ առիթով մը Արսէն Կիտուր թրքական դատարանին առջեւ երբ խիզախ խօսքերով ընդունած էր իր յեղափոխական ըլլալը կը գրէ հետեւեալը. «Ատեանիդ առջեւ կը խոստովանիմ որ յեղափոխական մըն եմ, եւ մահս աչքս առած: Մենք հայերէն երգ մը ունինք որ մեր յեղափոխական սկզբունքը կը խտացնէ իր մէջ.

Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի, Բայց երանի որ իր ազգին Ազատութեան կը գոհուի:»

Ան դատարանին առջեւ վերոյիշեալ տողերը թրքերէնի թարգմանելով կ'արտասանէ:

Վերջ ի վերջոյ թրքական իշխանութիւնները Ա. Կիտուրը կը ձերբակալեն ու կը բանտարկեն Պաղտատի մէջ: Անոր ամէնէն սիրելի աշակերտը՝ Սպիտ Սուլէյման իրեն կարող մարդիկ օգնական ունենալով գալն բանտէն կ'ազատէ: Խուլուսի պէյ անունով արաբ գիտնորականը, իր տեղեկագրին մէջ կը գրէ թէ տրուած վճիռին համաձայն Ա. Կիտուր Քուլթ-էլ-Ամարա դրկուած է կախաղան բարձրանալու համար:

Սպիտ Սուլէյման Արսէն Կիտուրը կը տանի արաբական էնչգի ցեղախումբին մեծաւորին քով, որպէսզի հոն թուրքերուն դէմ արաբական դիմադրութիւնը կազմակերպէ: Որոշ ատեն մը Ա. Կիտուր կը գործէ անոնց մէջ, արաբական ազգային ոգին արթնցնելով եւ զանոնք յեղափոխութեան մղելով: Անոր արաբ բարեկամները զայն դպրոց կը վերագրարձնեն պաշտօնավարելու: Ուսուցիչի խիստ կարիքը կար եւ դպրոցը փակուելու վտանգին առջեւ կը գտնուէր: Կարճ ժամանակ մը միայն ան կը մնայ դպրոցին մէջ: Վտանգը կրկին կը սպառնայ Ա. Կիտուրի կեանքին եւ ան այս անգամ շիթ արաբներու քով կ'երթայ, զանոնք յեղափոխութեան մղելու համար: Իր այդ առաքելութեան ընթացքին ան մինչեւ Տէր Զօրի անապատը կը հասնի եւ Եփրատի ափերուն վրայ ահանատես կը դառնայ բռնագաղթուած հայ տարագրեալներու տանջանքներուն: Կարելի եղած չափով Ա. Կիտուր անոնց օգնութիւն կը հասցնէ: Արսէն Կիտուր արաբի մը քով ծառայող տասնութ տարեկան հայ պատանիի մը կը հանդիպի: Պատանին կը ճանչնայ Ա. Կիտուրը,

# ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ



ԺԱՆՆԵՔՔ ԳԱՍՈՒՆԻ

Լեռան բարձունքն ի վեր մագլցող մարզիկը պահ մը կանգ կ'առնէ, կը նայի ետեւ՝ թէ որքան ու ինչպիսի ճամբայ կտրած է: Յետոյ գոհունակ սրտով եւ խանդավառութեամբ կը շարունակէ վերելքը:

Այս տարի, ՀԲԸՄ Հայ Կին կազմակերպութիւնն ալ ետ կը նայէր իր անցած 20 տարիներու ճամբուն, 1994էն մինչեւ 2014, արժեւորելով տարած աշխատանքները եւ նոյն ու աւելի թափով, լաւատեսութեամբ շարունակելու իր վերելքը:

Այս 20ամեակին առիթով, ուրախութիւն եւ հպարտութիւն պատճառող ձեռնակ մըն էր ՀԲԸՄի Արուեստի եւ Մշակույթի Յանձնախումբին նախաձեռնութիւնը, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 20, 2014ին, Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Զօրայեան սրահին մէջ: Ձեռնարկը նուիրուած էր երկու նոր հրատարակութիւններու. մին՝ ՀԲԸՄ Հայ Կինի հիմնադիր եւ ատենապետուհի Սոնա Եագուպեանի համադրած «ՀԲԸՄ Հայ Կին»-ի արժէքաւոր վաստակը, երկրորդը՝ վարչութեան անդամուհիներէն Սոնա Զէյթինի «Հայ Կնոջ Կեանքի Ուղիին Հետքերով» համապարփակ ուսումնասիրական աշխատանքը, որ արժանացաւ 2013ի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Գէորգ Մելիքեանի Մրցանակին:

Օրուան հանդիսավարն էր Սեպիլ Քէշիշեան, որ Սիրան Սեզայի Պէշրութի մէջ հրատարակուող Երիտասարդ Հայուհի պարբերականին աշխատակցած է եւ ազգային կեանքի մէջ նուիրուած ու գործունեաց հայուհի է: Ան ներկայացուց երկու բանախօսուհիները. առաջինը՝ իր հեղինակած գիրքերով ու երկրորդը՝ իր կրթական ասպարէզի վաստակով:

Իր խօսքին մէջ, Սոնա Զէյթին շեշտեց ազգային ուղեգիծ ճշդող հայուհիներուն աշխատանքները: Նախ անդրադարձաւ Աշխէն Թագուհին եւ Տրդատ Թագաւորին քրոջը՝ Խոսրովի դուստրի գորակցութեան Հայաստանի մէջ Քրիստոնէութեան առաջին քարոզիչներուն հետ: Արքունի կիները նոր կրօնը հայ իշխանները միաւորող ազգային բարիք նկատեցին եւ թէեւ իրենց հետեւորդներուն հետ միասին հալածուեցան, սակայն տեղի չտուին: Յաջորդական գարգացումներու հետեւանքով, ի վերջոյ Թագաւորն ու իշխանները ոչ միայն Քրիստոնէութիւնը ընդունեցին, այլեւ պետական կրօն հռչակեցին: Աշխէն Թագուհին եւ Խոսրովի դուստր օրիորդն ալ այդ ճակատագրական որոշման փաստաթուղթին վրայ ստորագրեցին: «Օտարներու պարտադրած կարգ ու կանոնն

անկախ՝ ազգային նոր ուղեգիծը... հայուհեան ազգային ինքնութեան հիմնաքարը դարձաւ»- վկայեց Սոնա Զէյթինն եւ օրինակներով հաստատեց, թէ դարերու ընթացքին, անկարելի եղած էր ազգային ինքնագիտակցութիւնը կամ ազգային մտածելակերպը ջնջել:

19րդ դարու ազգային Զարթոնքի շրջանին, անյետաձգելի դարձաւ հայուհեան 75-80 տոկոսը հաշուող գիւղացիութեան յետամնաց վիճակին դարման գտնելը: Գաւառ դրկուած մեծ թիւով ուսուցչուհիները տեղաշարժուած մտայնութեան առաջը առնելու համար, սկսան ուսման գուգահեռ՝ հայուհիները միաւորող գաղափարներ տարածել եւ ազգային գիտակցութիւնը զօրացնել: Այս աշխատանքը «ազգային իրաւունքներու եւ պարտականութիւններու տէր հաւաքականութիւն մը ըլլալու գիտակցութիւնը արմատացուց եւ ազգային ինքնապաշտպանութեան կռիւներուն համար գետին պատրաստեց»: Արդարեւ, դարերէ ի վեր գինակիր չտեսած գիւղերու մէջ հայ կանացի խումբեր սկսան կազմուիլ, որոնք գինեակ դիմադրութեան մասնակցեցան:

Յետոյ հայ կիներու մասին մենագրութիւններու հեղինակ Սոնա Զէյթինն հաստատեց. «Պատմութիւնը կը վկայէ, թէ տաճնապնդու ատեն հայ կինը իր ուժերը կը լարէ եւ հաւաքական ոյժ կը ստեղծէ, որպէսզի ազգը գոյատեւէ»: Յեղասպանութենէն ետք, հայ կինը աղէտեալներուն եւ տարագիրներուն օգնութեան հասաւ: Անատուրի հեռաւոր շրջաններուն մէջ ցրուած եւ ձուլուելու դատապարտուած կիներու, աղջիկներու եւ անչափահասներու հայուհեան վերադարձը հետապնդեց: Որբանոցներու կողքին դպրոց ու արհեստանոց հաստատեց: Որբորբուհիներու ուսում, կար ու ձեւ, ձեռագործ սորվեցուց որպէսզի ապրուստն ինքնուրուի: Աւելին, հիւանդանոց, մայրանոց ու դարմանատուններ հաստատեց: Իսկ փրկուածներուն համար ամուսնութիւն, որդեգրութիւն կարգադրեց:

«Գիտնալով որ բազմահազար գաղթականներ տունդարձի իրաւունք չունէին, հայ կնոջ համար անհրաժեշտ էր զանոնք օտար երկիրներու մէջ տեղաւորել եւ տեղական պայմաններուն յարմարելով հանդերձ, ազգային արժէքներու վրայ հիմնուած հասարակաց պայգայ մը կերտել»: Այս տեսակէտէն ոգեւորիչ եղան մարզական եւ սկստուական շարժումները, որոնք թէ՛ ազգային գիտակցութիւն մշակեցին եւ թէ՛ ազգային բնական վերանորոգման նպաստեցին:

Յարզ յիշուած հայուհիներուն մեծ մասը ազգին ու հայրենիքին հանդէպ իր պարտքը կատարած է օտար հողի վրայ: «Սակայն, մեր եւ

յաջորդ սփիւռքահայ սերունդներուն ազգային ուղեգիծը՝ տեղական եւ անկախ հայրենիքի կանանց հետ գործակցութիւնը պիտի ըլլայ» շեշտեց Սոնա Զէյթինն եւ աւելցուց, թէ կազմակերպչական օրինակելի նախաձեռնութիւն էր ՀԲԸՄ Հայ Կին-ի գործակցութիւնը 13 կանանց միութիւններու հետ, Յեղասպանութեան 100-ամեակը միասնաբար նշելու համար:

Հայրենի կանանց հետ գործակցութեան միացեալ ուղիներէն՝ բանախօսուհիներ թուեց ընտանիքին առողջ զարգացումը, գիտակից մայրութեան ամրապնդումը, խտրականութեան ջնջումը եւ հայուհեան արդար դատին հետապնդումը: Երբ հայուհեան մօտ 70 տոկոսը բազմամշակոյթ սփիւռքի բնակիչ է, հայ մշակոյթին գոյութիւնը երաշխաւորողը պիտի ըլլայ «ազգային ուղեգիծը, որուն արթուն պահակը՝ հայ կինն է»:

Սոնա Զէյթինն եզրակացուց. «Ազգային ուղեգիծը հայ կեանքը լուսաւորող մշտական փարոս է: Գործակցիչ ազգային ուղեգիծին հետեւող այսօրուան անուանի թէ անանուն հայուհիներուն հետ ու չմոռնանք անոնք, որոնք իրենց պարտքը կատարած ու պատմութեան անցած են»:

Օրուան երկրորդ բանախօսն էր Լօրա Գուլումեան, որ հայ լեզուի բաժնամուկի ատենապետուհի է ՀԲԸՄ վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական բաժնին: Ան կրթական մարզի մէջ փնտրուած դէմք է եւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանով պարգեւատրուած է:

Լօրա Գուլումեան 323 էջեր բովանդակող ՀԲԸՄ Հայ Կին-ի 20-ամեակի նուիրուած գիրքը՝ խմբագրութեամբ հիմնադիր եւ ատենապետուհի Սոնա Եագուպեանի քննարկեց եւ արժեւորեց իբրեւ բովանդակալից իրագործում:

Սկսելով կողքի նկարագրող մաներէն, ան վկայեց, որ ատոնք կը խորհրդանշէին ՀԲԸՄ Հայ Կին-ի նպատակը՝ ծառայել հայրենիքի եւ սփիւռքի: Ապա հատորին բովանդակութիւնը ամփոփեց հետեւեալ բաժինները նկատի ունենալով:

Առաջին, գրական գործերու բաժնին մէջ անդրադարձաւ Հայկանոյ Մաքի վաստակին: Այս վերջինը 13 տարիներ Պոլսոյ մէջ հրատարակեց «Հայ Կին» պարբերականը, որուն խմբագրականները ներշնչեցին նաեւ Սոնա Եագուպեանը, որ իր հիմնած միութիւնը անոր հետեւողութեամբ կոչեց ՀԲԸՄ Հայ Կին: Ապա, Լօրա Գուլումեան յիշեց Սիրան Սեզայի Երիտասարդ Հայուհի պարբերականը, որ հայ կնոջ կարեւոր դերը շեշտեց ընտանիքի եւ ընկերութեան մէջ, միշտ կրկնելով, «ցեղի մը սիրտը կինն է»:

Երկրորդ, բանախօսուհիներու ատեն հեռատեսիլի 2011-2014ի թիւով 40 յայտագիրները, որոնք Մէրի Մուրատեանի եւ Լուսինէ Նալպանտեանի ղեկավարութեամբ, ներկայացուցին գաղութային, քաղաքական եւ հասարակական այժմէական հարցեր:

Երրորդ գիծի վրայ կու գային հայրենիք-սփիւռք խորհրդաժողովներ եւ համաժողովներ՝ ՀԲԸՄ Հայ Կին միաւորի Երիտասարդուհիներու Յանձնախումբի» կազմակերպութեամբ եւ գործակցութեամբ տեղական համալսարաններու:

Չորրորդ բաժնով, յարգելի բանախօսուհին վկայեց, թէ 2008

թուականէն ի վեր, 12 թիւ պարբերականներ լոյս տեսած են, նախ Հայաստանի մէջ հրատարակուած Կանայք Հայոց անուան տակ, յետոյ ալ Լոս Անճելոսի մէջ հրատարակուող Հայ Կին անունով:

Հինգերորդ բաժինը կը բովանդակէ գրական էջեր, մարդկային եւ գաղութային հարցեր, յօդուածներ հայ կնոջ պատմութեան մասին, հայկական տօներ եւ սովորութիւններ, լուրեր հայրենադարձութեան եւ արտագաղթի, սփիւռքի հայ գրագիտուհիներու ցուցակը սեմինարներու եւ համաժողովներու, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ ՀԲԸՄ Հայ Կին-ի հաստատած Յղի կանանց Կեդրոններու մասին տեղեկագրութիւններ:

Լօրա Գուլումեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Գիրքը պատմական արժէք ունի եւ արժարժուած նիւթերը այժմէական են: Կը մաղթեմ, որ ՀԲԸՄ Հայ Կին-ը շարունակէ պատնէշի վրայ մնալ»:

Իր կարգին խօսք առաւ Թերեզա Ալաճաճեան-Հայրապետեան: Ան Արագած գրական թերթի խմբագրուհին է եւ ՀԲԸՄ Հայ Կին-ի Երիտասարդներու յանձնախումբի անդամ: Ան դրուատեց Սոնա Եագուպեանը, վարչութեան անդամուհիները, անոնց 20-ամեայ գործունէութիւնը, կազմակերպուած ձեռնարկները, որոնք կ'արձարծէին ընկերային եւ կնոջական հարցեր՝ լուծումներ առաջարկելով: Ան գովեստով արտայայտուեցաւ Հայաստանի Յղի կանանց Կեդրոններու մասին: Անոնց տուած այցելութեան ընթացքին, մեծ ապէս տպաւորուած էր ունկնդրելով վկայութիւն տուող յղի կիները, որոնք երախտագիտական ջերմ զգացումներով կ'արտայայտուէին ՀԲԸՄ Հայ Կին-ի մասին:

Թերեզա դրուատեց երիտասարդուհիներու խումբին աշխատանքները, Հայ Կին պարբերականին իրենց աշխատակցութիւնը եւ տարեկան սեմինարներ կազմակերպելը՝ տեղական համալսարաններու հետ: Իր խօսքի աւարտին, յատուկ կերպով շնորհաւորեց Սոնա Եագուպեանը, որ իր շուրջ կը բոլորէր ազգային յանձնառութեան տէր հայուհիներ:

Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան իր խօսքին մէջ շեշտեց հայ մօր կարեւոր դերը, որ կը հանդիսանայ «լծակ մը, առաքելութիւն մը յանուն հայուհիներու բարօրութեան սփիւռքի մէջ թէ հայրենիքի: Իսկ ՀԲԸՄ Հայ Կին այդ առաքելութեան մէջ կարեւոր բաժին կը ստանձնէր»:

Տէր Հայրը եզրափակեց ըսելով. «Յղի կանանց Կեդրոններով սկսուած բարի գործ մը յոյսի ու լոյսի ճամբայ ցոյց կու տայ: Վարձքերնիդ կատար»:

Վերջապէս, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, բարձրօրէն գնահատեց ՀԲԸՄ Հայ Կին-ը, որ «կը միացնէ եւ կ'արմատացնէ մարդկային ամենէն կարեւոր արժէքը՝ բարեգործութիւնը եւ այս կը բարձրացնէ մարդը դէպի Աստուած»:

Սրբազանը նշեց, որ ՀԲԸՄ Հայ Կին-ը օրինակելի եւ հոգիները շարժող ծառայութիւններ կ'իրականացնէր: Ան իրազեկ էր միութեան մեղուաջան աշխատանքներուն յաճախակի խորհրդակցութեան ճամբով: Ան մաղթեց որ շարունակուի նուիրական գործու-



### ԵՐՉԱՆԻԿ ՄԱՐԴՈՑ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Կան մարդիկ, որոնք իրենց շուրջը լույս ու ջերմություն կը սփռեն եւ երջանկություն կը պարզեն շրջապատին: Նման մարդոց համար կ'ըսեն, որ անոնք երջանիկ են: Իսկ ի՞նչը կը խանգարէ միւսներուն՝ երջանիկ ըլլալու հարցին: Հաւանաբար կան որոշ գաղտնի կանոններ, որոնք կ'օգնեն երջանիկ ըլլալու:

Իրականութեան մէջ երջանիկ մարդիկ լաւատես են եւ ունին աւելի հանգիստ մտածելակերպ: Անոնք թոյլ չեն տար միւսներուն փճացնելու իրենց տրամադրութիւնը:

Իսկ ի՞նչ գաղտնիքներ ունին երջանիկ մարդիկ: Գաղտնիքներէն մէկը ճիշդ ժամանակին անցեալը մոռնալն է: Պէտք չէ թոյլ տալ, որ անիկա թունաւորէ ձեր ներկան: Հետեւութիւններ ըրէք ձեր ըրած սխալներէն եւ անցէք առաջ: Լաւատեսութիւն՝ հիանալի մօտեցում որեւէ խնդրի: Անպայման պէտք է կեանքի մեծ նպատակ մը ունենալ, քանի որ անիկա կրնայ ուղղորդել ձեզ եւ ձեր արարքները:

Պէտք է ճիշդ նախասիրութիւններ ընտրել յարաբերութիւններու մէջ. գլխաւորը՝ սէր եւ փոխադարձ վստահութիւն: Որոշեցէք ձեր սկզբունքները ու հաւատարիմ մնացէք անոնց: Դուք ունիք ազատ ընտրութեան իրաւունք, եւ միայն դուք պատաս-

խանատու էր ձեր կեանքին համար: Ձեր անյաջողութիւններուն մէջ մեղաւոր էք միայն դուք:

Գնահատեցէք այն ամէնը, զոր ունիք: Կարեւոր համարեցէք այն հանգամանքները, որոնք արդէն կան ձեր կեանքին մէջ: Արուեստը լաւագոյն միջոցն է բարձր տրամադրութիւն ապահովելու համար:

Մշտապէս սորվեցէք, գորգացէք, եւ նոր հետաքրքրութիւններ ձեռք բերէք: Այս ամէնը միայն կ'օգնեն ձեզի երջանիկ ըլլալու համար:

Փորձեցէք նոր տաղանդներ բացայայտել ձեր մէջ եւ ինչու ոչ, դրամ չհասցէք անոնց միջոցով:

Մի կեդրոնանաք մանրութեան վրայ: Պարզապէս մոռցէք անոնց մասին եւ մի ծանրաբեռնէք դուք ձեզ:

Ձեր բոլոր որոշումները կայացուցէք սթափ ուղեղով: Քայլերը նոյնպէս պէտք է կշռադատուած ըլլան: Պէտք է ողջմտօրէն գնահատել ձեր հնարաւորութիւնները:

Չբաղեցէք այնպիսի բաներով, որոնք ձեզի հաճոյք պիտի պատճառեն: Փոքրիկ ուրախութիւնները կրնան օգնել ձեզի այս հարցով:

Փորձեցէք երջանկութիւն պարգեւել նաեւ ուրիշներուն: Պէտք է ազատիլ եսասիրութենէն եւ երջանկութիւն պարգեւել ձեզ շրջապատող մարդոց:

### ՎԵՑ ՈՒՏԵԼԻՔ, ՈՐՈՆՔ ԿԸ ԾԵՐԱՑՆԵՆ ԿԻՆԵՐԸ

Մտունդն ու արտաքին տեսքը անմիջական կապ ունին իրարու հետ: Յատկապէս կիներու արտաքին տեսքը կ'որոշուի անոնց սնունդով: Կան որոշ ուտելիքներ, որոնք կ'արագացնեն ծերացման գործընթացը:

1. Քաղցրաւենիք: Մեծ քանակութեամբ քաղցր պարունակող ուտելիքները կ'արագացնեն կլիւբոզի իրացման գործընթացը, որու ժամանակ շաքարի աւելցուկային մասերը կը միանան սպիտակուցներուն՝ յառաջացնելով վերջնական արտադրանք, որ կը վնասէ մորթին: Քաղցրաւենիքը վնասակար է նաեւ ակունքներուն համար: Նոյնիսկ մէկ կտոր կարկանդակ ուտելէն ետք անմիջապէս բերանը պէտք է ողողել ջուրով:

2. Ալբոլ: Ալբոլը կը յառաջացնէ ջրազրկում, որ շատ վտանգաւոր է մորթին համար: Անիկա կ'աւելցնէ թունաւոր նիւթերուն քանակը եւ կ'արագացնէ ծերացման գործընթացը:

3. Սպիտակ գինի : Յատկապէս

վտանգաւոր է ակունքներուն համար, քանի որ ունի թթուացնութիւն, որ կը վնասէ ակունքի էմալին: Փորձագէտները խորհուրդ կու տան սպիտակ գինի խմելէն ետք անմիջապէս լուալ ատամները:

4. Խորոված միս: Եթէ մարմնին մէջ կը յայտնուի ածուխ, անիկա նման է ածխաջրածիններուն, որոնք մարմնին մէջ կը հրահրեն բորբոքային գործընթացներ եւ բացասաբար կ'ազդեն մորթին վրայ, որ կը պատճառէ արագ ծերացում:

5. Աղի մթերքներ: Աղի չարաշահման իբրեւ արդիւնք՝ դէմքին վրայ կը յառաջանան այտուցներ, որոնք կարելի է վերացնել քաֆէին պարունակող խոնաւացուցիչի միջոցով:

6. Վերամշակուած միս: Վերամշակուած միսին մէջ կ'օգտագործուին պահածոյացման նիւթեր, որոնք բորբոքային գործընթացներ կը յառաջացնեն մորթին վրայ՝ արագացնելով ծերացումը:

### ԻՆՉ ԸՆԵԼ ԱՌՈՂՋ ՈՒ ԳԵՂԵՑԻԿ ԱՉՔԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՍԱՐ

Առանց պարկերու, մուգ շրջանակներու եւ կնճիռներու աչքեր կը փափաքին ունենալ բոլորը: Այդպիսի արդիւնքի հասնելու համար պէտք է հետեւիլ որոշ կանոններու: Արդիւնքը նկատելի պիտի ըլլայ մէկ շաբաթ անց:

Ճիշդ սնունդ: Որպէսզի աչքերը առողջ ըլլան եւ ունենան գեղեցիկ տեսք, անհրաժեշտ է ընդունիլ A, B, C եւ D կենսանիւթեր: Պէտք է չաճախ օգտագործել հնդկացորեն եւ վարսակ, պանիր, սերուցք, թթուասեր, խոզի թարմ միս, կաղամբ, լուբիա, կանաչ ոլոռն: Վարժութիւններ: Աչքերու մկաններուն աշխոյժ աշխատանքը կ'օգնէ պահպանելու եւ բարելաւելու տեսողութիւնը, իսկ հայեացքը կը դառնայ աւելի արտայայտիչ: Ատոնք կը կոչուին երիտասարդացնող վարժութիւններ, զորս պէտք է ընել ամէն օր:

Կծկել, ապա բանալ աչքերը: Վարժութիւնը կրկնել 6-7 անգամ: Նայիլ ուղիղ դիմացը, առանց գլուխը պտտցնելու հայեացքը ուղղել աջ: Այդպէս պահել երեք երկվայրկեան: Միւսը դիւրեք հայեացքը ուղղել վար, ձախ եւ վեր: Այնուհետեւ մօտ 1 վայրկեան հանգստանալ եւ վարժութիւնը ընել

հակառակ ուղղութեամբ՝ ձախ, վեր, աջ, վար: Վարժութիւնը կրկնել երեք անգամ:

Մերսում Վարժութիւններէն չեսոյցանկալի է աչքերը այնպէս մերսել, որպէսզի մաշկի վրայ ծալքեր չյառաջանան: Կարելի է մասններուն ծայրերը թաթիսել ձիթապտուղի ձէթի մէջ եւ թեթեւօրէն մերսել: Մօտ 30 վայրկեանէն ձէթի աւելորդ մասը հեռացնել անձեռոցիկով:

Դիմակներ եւ թրջոցներ: Ամէն երեկոյ աչքերուն դնել դիմակներ եւ թրջոցներ: Ազատքեղի տերեւները մանրօրէն կտրել, լաւ տրորել եւ խառնել թթուասերի հետ՝ 1:1 յարաբերութեամբ: Խառնուրդը քսել կոպերուն: 10-15 վայրկեանէն բամպակով զգուշօրէն մաքրել դիմակը եւ կոպերուն քսել որեւէ քսուք: 10 վայրկեան յետոյ կանաչ թէյի մէջ թաթիսուած բամպակով հեռացնել քսուքի եւ դիմակի հետքերը:

Երիցուկով թրջոց. 1 ճաշի դգալ դեղատնային երիցուկի վրայ լեցնել 1 գաւաթ եռացած ջուր: Երբ ջուրը դառնայ սենեակի ջեր մաստիճանի, բամպակը թաթիսել թուրմի մէջ եւ դնել կոպերուն վրայ: Թրջոցները պէտք է կոպերուն դնել օրական 5-6 անգամ:

### ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ԿՐՆԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵՐՈՒԺՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ԴԱՌՆԱԼ

21-րդ դարը ծնողներուն կը սորվեցնէ փոքրիկներուն դաստիարակութիւնը ուղղել դէպի գիտակցութեան զարգացում, ճանաչողական եւ կամային գործընթացներ:

Բայց թէ՛ մեծերու, թէ՛ փոքրերու ներքին աշխարհին մէջ կան ենթագիտակցութիւն, յուզումներ ու զգացումներ՝ ներքին աշխարհի այն մասը, որ չաճախ կը դառնայ ջղախիւն ճգնաժամերու, ճնշումներու եւ անքնութեան պատճառ՝ նոյնիսկ մեծերու մօտ:

Օրինակ, Հնդկաստանի մէջ, ուր գոյութիւն ունի մարդու ներքին հոգեկան աշխարհի հանդէպ ուշադրութեան հնագոյն աւանդույթ, հեքիաթը կը կիրարկուի իբրեւ հոգեբուժութեան միջոց: Ներթափանցելով հեքիաթային աշխարհ՝ փոքրիկը կը թափանցէ սեփական հոգիին խորքը եւ հեքիաթի միջոցով կը սկսի կարգաւորել զայն:

Մինչեւ գրի առնուելը, հեքիաթը միլիոնաւոր անգամ պատմ-

ուած է, եւ անէական բաները կորսուած են, մնացած է միայն ամենազլխաւորը, որ հեքիաթը դարձուցած է մարդկային իմաստութեան գոհար: Փոքրիկները կը շնչաւորեն բնութեան երեւոյթները, կենդանիներն ու բոյսերը, այս պատճառով դիւրութեամբ կը հասկնան հեքիաթներու լեզուն: Հեքիաթի հերոսները պարզ եւ օրինակելի են, հեքիաթին մէջ միշտ բարին կը յաղթէ չարին, բարոյական հասկացութիւնները կը փոխանցուին հասկնալի կերպով:

Փոքրիկը կրնայ լսել հեքիաթը սկաւառակով, դիտել հեռատեսիլով, բայց ամենալաւ տարբերակը փոքրիկին նայելով պատմելն է, անոր հարցերուն պատասխանելը: Այս կերպով կրնաք նկատել, թէ աճի ո՞ր աստիճանը չի կրնար փոքրիկը յաղթահարել: Այդ պարագային կրնաք պատմել համապատասխան հեքիաթ կամ անոր ամենասիրելի հեքիաթը:

### ԻՆՉՊԵՍ ՀԱՍԿԱԼ ԿՆՈՋ ԽԱՌՆՈՒԱԾՔԸ ԱՆՈՐ ԺՊԻՏԻՆ ՄԻՋՈՑՈՎ

Ծիծաղն ու ժպիտը հիւանդութեան եւ ծերութեան դէմ պայքարի լաւագոյն միջոցներն են: Հոգեբաններու համար ծիծաղը բարձր տրամադրութիւն ապահովելէ զատ, շատ լաւ միջոց է մարդու խառնուածքն ու բնաւորութիւնը որոշելու համար:

1. Հանգիստ եւ հազիւ լսելի ծիծաղը ցոյց կու տայ, որ տուեալ կինը շատ ուժեղ, իմաստուն եւ կամակոր է:

2. Թեթեւ, քիչ մը չարածիճի ծիծաղը «կը խօսի» բարի, համեստ եւ կենսուրախ մարդու մասին:

3. Քրքիջը կը վկայէ խելացի, ռոմանթիկ եւ հետաքրքրական բնաւորութեան մասին:

4. Հոգիի խորքէն բխող շարունակական ժպիտը բնորոշ է անկեղծ, նուրբ եւ անգամ քիչ մը երեւակայական անձերուն:

5. Մշտապէս իր ծիծաղը ձեռքի ափով ծածկող կինը «կը խոստովանի», որ ամէկտու է եւ ինքնավստահութեան խնդիրներ ունի:

6. Շատ ժպտերես եւ մշտապէս ժպտացող կինը կ'ապացուցէ իր ուժեղ եւ արտայայտուած խառանուածքին մասին:

7. «Համեստ» ծիծաղը, որ մշտապէս բնականի սահմաններուն մէջ է, կը վկայէ կնոջ ինքնավստահութեան եւ դաստիարակութեան մասին:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel :----- Fax :-----

### Հայկական կողմը մեղադրանք ներկայացուց

Շարունակում է 1-ին

իրաւաբանը:

Միւս կողմէ, Յունուար 21-ին փոքրիկ Սերյոժա Աւետիսեանի մարմինը հողին յանձնուեցաւ Գիւմրիի «Շիրակ» քաղաքային գերեզմանատան մէջ՝ Յունուարի 12-ին սպաննուած ընտանիքի միւս 6 անդամներու կողքին:

Բազմամարդ թափօրին մաս կը կազմէին Շիրակի մարզպետարանի եւ Գիւմրի քաղաքի դեկավա-

րու թիւնը, պատգամաւորներ, արտասահամանէն ժամանածներ, հասարակական գործիչներ, գոհուածներու հարազատները եւ պարզապէս քաղաքացիներ:

Վեց ամսական երեխան միակն էր, որ կենդանի մնացել էր գիւմրեցի Աւետիսեաններու ընտանիքի սպանդէն յետոյ: Իրաւապահները յայտնաբերած էին զինք վիրաւոր՝ կուրծքի վրայ, ծակող գործիքով ծանր վիրաւորուած: Փոքրիկը մահացաւ եօթը օր յետոյ:

### Թուրքիոյ Վարչապետի Կոչը Հայութեան

Շարունակում է 1-ին

«Թուրքիա նախապէս յայտարարած է, որ պատերազմի պայմաններուն մէջ ստիպուած եղած է գործադրելու պարտադիր գաղթի քաղաքականութիւն, որուն հետեւանքով ոչ մարդկային հետեւանքներ եղած են: Թուրքիան կը կիսէ հայերուն ցաւը եւ վճռական ջանքեր կը գործադրէ երկու ժողովուրդներու միջեւ կրկին զգացումային կապեր ստեղծելու համար:

Մեր յարաբերութիւնները պատանդ վերցուցած թշնամանքը յաղթահարելու համար եւ երկխօսութեան միջոցաւ շարժելու անհրաժեշտութեան մասին վճռական

յայտարարութիւնը 2014-ի Ապրիլ 23-ի ցաւակցական ուղերձն է: Հնարաւոր է, որ երկու ժողովուրդներ հասնին իրար հասկնալու եւ միասին ապագային նայելու հասունութեան: Անհրաժեշտ է, որ փոխադարձ վստահութեան եւ համագործակցութեան հասկացութիւն գարգացնենք, 800 տարուայ համատեղ պատմութեան լոյսին տակ իրար դարձեալ ճանչնանք եւ մարդկային յարաբերութիւններու մէջ ըլլանք: Մեր հայ բարեկամները կը հրաւիրենք այցելելու Թուրքիա՝ փոխադարձ կարծրատիպերը վերացնելու համար», եզրափակեց Թուրքիոյ վարչապետը:

### Ամերիկացի համանախագահը զգուշացնում է

Շարունակում է 2-ին

պարբերաբար ապակայունացման ասեղի վրայ նստեցնելով փոխարինել թէ Ատրպէյճանի, թէ նաեւ կովկասում հիմնականում հենց նախաձեռնող շնորհիւ կառուցուած քաղաքականութեամբ առաջնորդող Ռուսաստանի ներկայիս նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչը:

Այս վերաբերմունքն ամենեւին պայմանաւորուած չէ նրանով,

որ Ատրպէյճանը հետապնդում է ԱՄՆ ֆինանսաւորմամբ հեռարձակող Ազատութիւն ռատիոկայանի Պաքուի աշխատակիցներին: Իրավիճակը լիովին հակառակ պատճառահետեւանքային կապն ունի՝ Պաքուն այդ հետապնդումներն իրականացնում է ի պատասխան այն իրողութեան, որ աստիճանաբար կայուն տեղ է զբաղեցնում ամերիկեան «չարի կայսրութիւնում»:

«ԼՐԱԳԻՐ»

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՄԱՅՈՒԱՆ ՑՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Շարունակում է 7-ին

թեան եւ Արդարութեան տարեկան երկրորդ շքանշանը: Թաներ Աքչամ շնորհակալութիւն յայտնեց իրեն ի պատիւ եղած յարգանքի այս արտայայտութեան համար: Ապա դրուատեց Հրանդ Տինքի արդարութեան եւ հաւասարութեան համար տարած խիզախ պայքարը: Բուռն կերպով դատապարտեց օրուան իշխանութիւններու երկդիմի քաղաքականութիւնը եւ զօրակցութիւնը «Թալաթ Փաշա» կազմակերպութեան որուն գոհը դարձաւ ազատութեան եւ մարդու իրաւունքներու ջերմ պաշտպան Հրանդ Տինքը:

Խիստ հետաքրքրական էր բեմին վրայ նստակեաց վիճակով տեղի ունեցած երկխօսութիւն-հարցազրոյցը, հանդիսավար էտվին Մինասեանի եւ Թանէր Աքչամի միջեւ, որուն մասնակցեցան նաեւ ներկաները: Փրոֆ. Աքչամ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատի լուծման համար այն կարծիքը յայտնեց որ ըստ իրեն առաւել դրական հաւանականութիւններ կան եթէ Հայաստան Թուրքիա եւ սիրիւք-Թուրքիա հասարակական կազմակերպութիւններու միջեւ լուսաբանական հանդիպումներ տեղի ունենան: Այսպիսով ցեղասպանութեան ճանաչումը կրնայ իրականանալ, որմէ ետք առնուելիք յաջորդ քայլն անտարակոյս պահանջատիրութիւնը կ'ըլլայ: Այս կապակցութեամբ Թաներ Աքչամ օրինակ բերաւ 1951 թուականին երկ-

րոր համաշխարհային պատերազմի վաղորդային Լիւքսեմպուրկի մէջ բանակցային գործընթացը, որ տեղի ունեցաւ մէկ կողմէ Խորալէլի եւ Գերմանիոյ, իսկ միւս կողմէ Սփիւռքի Հրեաներու Միութեան եւ Գերմանիոյ միջեւ: Արդարեւ այդ բանակցութիւնները ի վերջոյ յանգեցան պահանջատիրութեան եզրայանգումին որ է հատուցում ողջակիզման («Հոլոքոսթ») գոհեցում:

Սոյն միջոցառումին խօսք առաւ նաեւ Մեծ Եղեռնի 100-ամեակի ոգեկոչման Համագաղութային Մարմնի համատեղապետ իրաւաբան Կարօ Ղազարեան: Ան ըսաւ թէ հայութեան պահանջատիրութիւնը չի վերջանար 100-ամեակի նշումով: Այլ մեր պայքարը պիտի շարունակուի Յեղասպանութիւն գործադրած Թուրքիոյ դէմ մինչեւ իրաւատէր հայ ժողովուրդի արդար դատի լուծումը: Այնուհետեւ ան պարզեց Լոս Անձեւելոսի մէջ 100-ամեակի կապակցութեամբ նախատեսուած բազմաթիւ միջոցառումներէն միայն հինգ կառուցադրանքներ:

Հրանդ Տինքի նուիրուած սոյն երեկոյթի գեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնը բերաւ շնորհալի երգիչ Դաւիթ Սամուէլեան:

Միջոցառումն աւարտեցաւ «Կիլիկիա» խմբերգով, որուն յաջորդեց պատշաճ հիւրասիրութիւն:

Գնահատելի ձեռնարկ մըն էր, որուն համար կը շնորհակարգեմ կազմակերպիչները:

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆԱԽԱՍԵՄԻՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Շարունակում է 8-ին

Գիտաժողովի անդերէն բաժնի համադրողն էր իրաւաբան՝ Տիկ. Թամար Փօլատեան:

Այս բաժնի մէջ նախ խօսք առաւ բանաստեղծուհի եւ գրող՝ Թինա Տէմիրճեան, որ շեշտեց յիշողութեան եւ պատմութիւններու կարեւորութիւնը, իրականութիւններու բացայայտման եւ փաստարկման մէջ:

«Անցեալի դէպքերը կամուրջ են դէպի ապագան եւ պատմութեան մանրամասնութիւններուն մէջ չսպասուած փաստեր կան» ըսաւ ան:

Իրաւաբան Մարօ Նաճարեան-Եագուպեան իր փորձագիտութեամբ, հմտութեամբ եւ հայ մշակոյթի հանդէպ ունեցած մեծ սիրով, խօսեցաւ զայն պահպանելու կարեւորութեան մասին, ներկայ թուարկային «digital» դարուս մէջ եւ սոյն միջոցի բազմազան առաւելութիւններու շուրջ ան վստահեցուց որ ցեղասպանութեան ինդրի լուծման մէջ մեծ դեր պիտի ունենայ արհեստագիտութիւնը «թէքնոլոճի»:

Յայտագրի վերջին բաժինով ներկայացաւ իրաւաբան Արուսիկ Յարութիւնեան, որ անդրադարձաւ հայ կնոջ կարեւոր դերին մասին՝ հայ ընտանիքէն ներս եւ Յեղասպանութեան գիտակցութեան արթնութեան գործին մէջ: Ան շեշտեց նաեւ հայ երիտասարդները մղելու Հայոց Յեղասպանութեան եւ հայ դատի աշխատանքներուն մէջ:

Պատմութեան ընթացքին, հայ կինը ճաշակած ըլլալով հանդերձ ամէն տեսակի փորձութիւններ եւ նոյնիսկ ցեղասպանութիւն, միշտ իրեն յատուկ ճկունութիւնը ունեցած է կրկին ոտքի կանգնելու եւ յարատեւելու:

Լոս Անձեւելոսի՝ Հայոց ցեղասպանութեան Հարիւր Ամեակի առթիւ հայ կանանց համախմբումի կազմակերպած սոյն գիտաժողովը ամէնաբարձր գրականներ հանդիսացաւ հայ կնոջ վճռականութեան՝ հասնելու դէպի պայծառ ապագայ, իր արժանապատուութեամբ, իմաստութեամբ, հատուկութեամբ եւ նուիրուածութեամբ, ուխտելով միշտ մնալ իր Ազգային Ուղեգիծի արթուն պահակը:

Լ.Մ.

### ԱՐԺԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Շարունակում է 8-ին

Պրն. Փօլ Գրիգորեան, որմէ ետք սկստուտներուն գլխաւորութեամբ թափօրը դուրս եկաւ նորած Ապրիլեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղում եւ յարգանք՝ մէկուկէս միլիոն նահատակներուն չիշատակին:

Ապա, Հ.Բ.Լ.Մ.-ի Ասպետներու Համախմբումին հրաւերով տեղի ունեցաւ ընդունելութիւն, ուր Միութեան փոխ-ատենապետ Պրն. Սինան Սինանեան, Արեւմտեան շրջանի ատենապետ Պրն. Գրիգոր Գարակչօզեան եւ Ասպետներու ատենապետ Տոքթ. Յարութ Եաղսրզեան շնորհակալութիւն յայտնեցին Առաջնորդ Յովնան Սրբազանին, ցուցաբերուած այս յատուկ յարգանքին համար: Վերջինս, անգամ մը եւս կարեւորեց


Հ.Բ.Լ.Մ.-ի մատուցած համահայկական օժանդակութիւններն ու ծրագիրները:

Տոքթ. Եաղսրզեան շնորհակալութիւն յայտնեց ու յուշանուէրով մը պատուեց Պրն. Գարակչօզեանը՝ նշելով անոր ատենապետութեան շրջանի աւարտը, իսկ Յովնան Սրբազանին նուիրեց Երեւանի Յեղասպանութեան թանգարանին եւ Ասպետներուն հրատարակած նորատիպ հատորէն օրինակ մը, որուն ներկայացումն ու ցուցահանդէսը տեղի պիտի ունենան 8-10 Ապրիլ 2015-ին, Սքիւրպոլ կեդրոնին մէջ:


Հ.Բ.Լ.Մ.-ին պիտի յաջորդեն այլ կազմակերպութիւններ, որոնք նոյնպէս պիտի արժանանան Հայոց Առաջնորդարանի յարգանքին՝ ի տես չեւ Յեղասպանութեան անոնց կատարած ազգային լայն գործունէութեան:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՍԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Զարոփաբարձիք բուժում:  
 Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:  
 Ինքնաշարժի վնասի հետեւանքով պատահած վնասումներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

### ԿԱՆԱԶԵԱՆ, ԱԹԱԹԻՐՔ ԵՒ «ՀՈԹԵԼ ՊԱՐՈՆ»...

Շարունակում է 13-էն

այդ չափերուն՝ (եւ երեւի կը խանգարուի)՝ բայց նաեւ կ'արձանագրէ գանձը: Այսպէս՝ քայլերգը եւ «Օրօր»ը կը յաջորդեն իրարու փոխին ի փոխ՝ մին գորաւոր եւ միւսը մեղմ...: Բայց արդեօք հնարաւոր է...: Կանաչեան իր ներաշխարհին մէջ, ինչ խօսք՝ կը շարունակէ ապրիլ «Օրօր»ին միջնորդութիւնը եւ մեղեդիին մէջ...: Երբ փողերային խումբի երաժշտութիւնը եւ անոր ձայնը կը հեռանան, կը մնայ միայն մեղմ ու քընքուշ «Օրօր»ը՝ նոյնինքն ստեղծագործուած «Հոթել Պարոն»ի մէջ...:

Զօրավար Մուսթաֆա Քեմալը, որ յետագային դարձաւ Աթաթիւրք, ապրած է «Հոթել Պարոն»ին մէջ եւ աւելի քան ութ ամիս՝ 1918 տարիներուն... Պաղեստինի ճակատի վրայ Թրքական բանակները ծանր պարտութիւն կրելով, Մուսթաֆա Քեմալ եւ իր բանակը դուրս եկան Հայկական եւ «Հոթել Պարոն»էն...: Իրենց հետ տարին իրենց զինուորական սարքերը, բայց նաեւ հայկական «կորգած» շատ թանկագին մետաղ...: Եթէ Աթաթիւրքը մոռցած էր բռնատէր զինուորականի իր ապրած կեանքը եւ անոր ձգած հետքերը ու տակաւին «իւրացուցած» մետաղները, սակայն երեւի չէր մոռցած «Հոթել Պարոն»ը...: 1920 թուականներուն, երբ Հայկաի երկաթուղիի ընկերութեան Ֆրանսացի տնօրէնը պաշտօնի եւ գործի բերումով գացած էր Թուրքիա, ան հանդիպած էր Աթաթիւրքին...: Աթաթիւրք իմանալով թէ Ֆրանսացի տնօրէնը կուգայ Հայկական, առաջին հարցումը կ'ըլլայ անոր: «Դեռ կը գոչատե՞՞ «Հոթել» Պարոնը...»: Ու տակաւին՝ «...հայա Մագլումեան ընտանիքը ինչպէս՞ են...»:

Տօքթ. Ռոպէր ձեպէճեան, որ մանուկ տարիքին ապրած է Աթաթիւրքին «արհաւիրքը»՝ չի մոռնար իր պատասխան-ակնարկը ընելու եւ իր յուշերուն մէջ...: «Այո Պր. Նախագահ, կը գոչատե՞ պատմական Պանդոկը ուրիշ շատ շատերու նման, չէ քանդուած: Կը վերապրին Մագլումեանները ու Հայ ժողովուրդն ալ, որ դեռ կը բազմանայ»: Արմէն Մագլումեան՝ Գրիգորի որդին, որ տակաւին կ'ապրի Հայկաի եւ ներկայիս տէրն ու տնօրէնն է պանդոկին, մեկնելով երկրին մէջ տեղի ունեցած ահռելի իրադարձութիւններուն ըսած է

(պանդոկին մասին): «Բայց այս բոլորը անցեալի մէջ է: Անկեղծ ըսեմ, հիւրանոցը ալ երբեք առաջուանը չ'ըլլար: Լաւագոյն տարիները ետեւ մնացին»:

Հասկնալի է Արմէնին «ցաւը»...: Պատերազմական այս վիճակին մէջ, շատ դժուար է տեսնել հորիզոնին վրայ երեւցող-չերեւցող «Յոյս»ը...: Եւ այս նոյնինքն «Յոյսին» ներշնչող եւ ներշնչեցնող լաւ ու լաւատեսութիւնը...: Բայց Հայը՝ իր պատմութեան ամբողջ գնացքին մէջ հաւատաց, կարչեցաւ եւ ապրեցաւ այս «Յոյսով» եւ որուն միջոցաւ տեսաւ հորիզոնին վրայ երեւցող «լաւագոյն տարիները», որ կու գար անցեալէն՝ եւ կ'ապրէր ներկային մէջ ու տակաւին գալիք օրերու հաշուին: Այս «Յոյսով» է որ հայը «վերապրեցաւ» ու «բազմացաւ»...:

Կանաչեանը ստեղծագործեց իր նշանաւոր «Օրօր»ը «Հոթել Պարոն»ին մէջ...: Աթաթիւրքը չի մոռցաւ «Հոթել Պարոն»ը...: Ու տակաւին երկար է շարքը անոնց՝ ներառեալ իրադարձութիւններուն, որոնք «Հոթել Պարոն»ին մէջ ու անոր մէջէն ստեղծեցին Հայկական «Աւանդ»ը, որ տուեալ «Մշակոյթ» եւ եղաւ ապրելու եւ բազմանալու հիմք...: Հայը այս «Աւանդին» հաւատաց ու տակաւին պիտի ու պէտք է շարունակէ հաւատալ...:

Դժուար է այս՝...: Բայց Հայուն պատմութեան փորձն է այս...: Եւ որ միշտ դժուար եղած է...:

Կանաչեան, Աթաթիւրք եւ «Հոթել Պարոն»...: Հայուն Աւանդին «վերապրելու» եւ «բազմանալու» մէկ իրական փաստը...:

«Հոթել Պարոն»...: Հոն ուր Կանաչեան Հայը ստեղծագործեց...: Եւ Աթաթիւրք՝ Թուրքը չի մոռցաւ...:

Իսկ մենք այսօր...: Մեզի կը մնայ ամուր կենալ այս Հաւատքին ու Աւանդին շարունակականութեանը մէջ: Արժէ «լաւագոյն տարիները» տանիլ դէպի «հորիզոն» թէ՛ կուզ հեռու եւ ոչ խաղաղ միջնորդութի մէջ: Եւ ոչ թէ «չ'ըլլալու» համար՝ հայա «առաջուանը» ընել մղիչ ուժ, աւելի լաւ վաղուան օրը ստեղծելու տեսլականով...:

Եւ արժէ որ Հայը հաւատայ այս «ուժին»...: Որովհետեւ այս «ուժին» մէջ ու անոր միջոցաւ է, որ Հայկաի եւ Հայը ամբողջ պիտի «վերապրին»...: Եւ «Հոթել Պարոն»ը ու Հայուն բոլոր էութիւնները պիտի «բազմանան»...:

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԿՐՈՅՐ ՌՈՅ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆԻ ՅԵՏ

Շարունակում է 14-էն

չինացի, սպանախօս թէ անգլիախօս՝ շատ աւելի լաւ արդիւնքներու կը հասնին: Արդէն փաստուած է, որ մարդ երբ երկրորդ լեզուի մը կը տիրապետէ ամէն կերպով աւելի կը յառաջդիմէ: Կ'ուզենք այդ ծրագիրը աւելի մշակել եւ իրականացնել: Եւ ինչու չէ, նպատակ ունինք միաժամանակ երեք լեզու դասաւանդել. այս մէկը նորութիւն է Փաստինայի մէջ: Մեր երկրորդ ընտրաշրջանին մէջ հայութեան թիւը մեծ է: Նախ պիտի փորձենք երկլեզու դասընթացը յաջողցնել, եւ ապա դասաւանդել հայերէն լեզու, հայոց պատմութիւն եւ մշակոյթ:

Մեր գլխաւոր նպատակներէն մէկն է նաեւ հայ պաշտօնեաներու թիւը բարձրացնել քաղաքին մէջ, ըլլայ ուսուցչական թէ այլ:

- Ժամկէտներ կա՞ն արձանագրուելու եւ ընտրութեան մասնակցելու:

- Այո, ամէնէն ուշը ընտրութիւններէն 15 օր առաջ: Սակայն նախընտրելի է կանուխ արձա-

նագրուիլ, մանաւանդ եթէ կանուխ պիտի քուէարկէք: Անոնք որոնք չեն նախընտրել վերջին օրը քուէարկութեան երթալ եւ տունէն նախօրօք կ'ուզեն քուէարկել, մեր կոչն է, որ օր առաջ արձանագրուին եւ քուէարկեն: Շատ կարեւոր է արժեւորել իւրաքանչիւր ձայն եւ պէտք չէ վստահիլ ընդհանուր միջնորդին: Այդ մէկը թուութեան նշան է: Ամէնէն դիւրինը, այցելել քաղաքապետարան, հանրային գրադարան, նամակատուն մը կամ DMV, եւ լրացնել ընտրական հարցաթերթիկը եւ քուէարկել: Քանի մը վաչկեանի խնդիր է, միայն: Եւ կամ այցելել [registertovote.ca.gov](http://registertovote.ca.gov) կայքը եւ արձանագրուիլ:

- Պարոն Պուլղուրճեան, ամենայն յաջողութիւն կը մաղթեմք ձեր ընտրական աշխատանքներուն եւ կը հրաւիրեմք Փաստինայի հայութիւնը, որպէսզի մասնակցի եւ իր ձայնը տալով ձեզի, հայութեան ձայնը լսելի դարձնէ Փաստինայի ուսումնական համակարգէն ներս:

Հարցազրոյցը վարեց՝ ՀՐԱԶ ՍԵՓԵԹՃԵԱՆ

### ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 16-էն

նէութիւնը, թելադրելով հաւատք եւ զօրակցութիւն:

Սրբազանը շնորհաւորեց ՀԲԸՄԻ Արուեստի եւ Մշակոյթի Յանձնախումբը, օրուան լաւ կազմակերպուած ձեռնարկին համար: Իր խօսքի աւարտին, Սոնա Եագուպեանը պատուեց յատուկ յուշանուէրով մը:

Յետոյ, Հայկ Մարրեան ՀԲԸՄԻ կողմէ պատուեց Սոնա Զէյթեանը՝ ազգային, կրթական, ընկերային եւ մշակութային աշխատանքներուն համար սփիւռքահայ կեանքի մէջ:

Ան շնորհաւորագիրներ յանձնեց Մէրի Մուրատեանին եւ Լուսինէ Նալպանտեանին՝ հեռատեսիլային յայտագիրներուն կանոնաւոր կերպով ընթացող աշխատանքներուն համար:

Ձեռնարկի աւարտին, Սրբազանը ՀԲԸՄ Հայ Կին-ի վարչականներուն «օրհնութեան եւ գնահատանքի» վկայագիրներ յանձնեց:

Ներկաները երկար ատեն յամեցան թէյսասեղանի շուրջ, շնորհաւորելով ՀԲԸՄ աշխատանքները, ձեռնարկը կազմակերպողները եւ խօսք առնող պատուական բանախօսները:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
[vamedia@yahoo.com](mailto:vamedia@yahoo.com) • [www.vaprintmedia.com](http://www.vaprintmedia.com)

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

**ԽՆԱՄԱԿԱԼ ԿՈՒՉՈՒԻ**

Թահանկայի շրջանին մէջ, Տիկնոջ մը համար  
խնամակալ կ'ուզուի:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել  
(818) 875-8021 թիւին:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք  
«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: [massis2@earthlink.net](mailto:massis2@earthlink.net)

# ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Շարունակում է 15-էն

որ քանի մը տարի առաջ ազգային գործով Ատաբազարի մէջ իրենց տունը այցելած էր: Ուրիշ հայ տարագրեալ մը Կիտուրի կը պատմէ իր տեսածները ըսելով. «Մէկ չէ, հազար չէ, ամբողջ Եփրատի եզերքը մակադած են խեղճերը, օրաուր մահուան սպասելով: Շատերը ինքզինքնին ջուրը կը նետեն, եւ ոմանք ալ իրենց զաւակները ծախելով արաբներուն՝ թէ զաւակը ազատած կը սեպեն, եւ թէ փոքր դրամ մը ձեռք կը բերեն իրենց սովահար կեանքը ի գուր քարշ տալու բնագոյով»:

Արսէն Կիտուրի ամէն գիշեր նոր դրուագներ կը լսէ հայ բռնագաղթեալներու մասին: Ատաբազարէն մինչեւ Զապուրի (հաւանաբար՝ Խապուրի - Յ.Ի.) անցքերը, թալան, կողոպուտ, բռնաբարոյս, սպանութիւն: Խելագարուածներու թիւը կը բազմանար: Ծարպիկ հայ տարագրեալներ կը յաջողէին Սինճար լեռներուն վրայ եգիպտացիներու քով ապաստանիլ: Հայասէր եգիպտացիներու Շէյխ Էմիր Իսմայիլը հայոց առջեւ իր դռներուն բաց ըլլալը կը յայտարարէր: Անդին, Ամանուսի լեռներուն վրայ (Կեալուր Տաղը կոչուած լեռ) բռն մը հայ քաջեր թուրքերուն դէմ գինեալ պայքար կը տանէին: Արաբական անապատներու մէջ, արաբ յեղափոխականներ կը կռուէին բռնատէր թուրքերուն դէմ: Այս մասին հեղինակը՝ Արսէն Կիտուրի կ'ըսէ. «Որոշեցի ամէն միջոցներ ձեռք առնել, որ արաբներուն հարուածները ըլլան վճռական, բոլորը կը սպասէին թրքական նահանջի մը, որպէսզի հոսիկու հարուածներով ի սպառ հեռանային իրենց դարաւոր թշնամիէն»:

Այդ միջոցին Արսէն Կիտուրի մալարիա հիւանդութեամբ կը վարակուի: Ան հնարամիտ քայլի մը կը դիմէ: Քուրթ-Ամարայի մէջ սպանուած թուրք զինուոր՝ Սպարթացի Հասանին անձնաթուղթը կը գրպանէ եւ անով Պաղտատ կը մեկնի ու պետական հիւանդանոց կը մտնէ: Բարեբաւորի դիպուածով մը, հիւանդանոցին բժիշկը իրեն բարեկամ՝ Տօքթ. Սիմոն Քիւրթեանին էր, որուն նախապէս լաւ կը ճանչնար:

Բժիշկը իրեն լաւ հոգ կը տանի: Ա. Կիտուրի շուտով կ'ապաքինի, սակայն ապահովութեան համար հիւանդանոցին մէջ կը մնայ ատեն մը: Ան բնաւ չէր մոռցած Տէր Զօրի անապատին մէջ իր տեսածներն ու լսածները: Կիտուրի բժիշկին կը պատմէ. «Հրաշքի դար կ'ապրինք, Տօքթոր, դուն Տէր Զօրի անապատը պիտի երթաս, որ հասկնաս թէ իմ սպանութիւնը շատ ոչինչ է այն ահուկ եղեռնի դիմաց, որուն ենթարկուած է ամբողջ հայութիւնը»:

Արսէն Կիտուրի ամէնէն հաւատարիմ աշակերտը՝ Սայիտ Սուլէյման հօրը հետ հիւանդանոց կու գայ ու կը յայտնէ իր ուսուցիչին թէ ամէն կարգադրութիւն եղած է որպէսզի Կիտուրի վերադառնայ Սուլէյմանի դպրոցը, որ փակուած էր: Արաբները կը փափաքէին վերաբանալ դպրոցը: Արսէն Կիտուրի կը համաձայնի հետեւեալ ձեւով մտածելով. «Արկածախնդրութեան տրամադրութիւններս գլուխ բարձրացուցին: Ես արդէն մեռած մարդ մըն եմ, ի՞նչ պիտի կորսնցնեմ: Գործեմ իրենց զօած ճամբով»:

Արսէն Կիտուրի կրկին կը սկսի դասաւանդել վերաբացուած Սուլէյմանի դպրոցին մէջ: Թուրք սպայ թէվիթի միշտ անոր կը հետեւի ու կը հետապնդէ զայն: Ան օր մը կը փորձէ առեւանգել Կիտուրը եւ քուրթ-Ամարա տանիլ, տրուած վճիռին համաձայն զայն կախողան բարձրացնելու համար: Այս անգամ եւս Սայիտ Իսմայիլ եւ ընկերները Արսէն Կիտուրը մահուանէ կ'ազատեն:

Արաբ յեղափոխականները տեսնելով որ սպայ թէվիթի քայլեւս շատ վտանգաւոր անձ մը դարձած էր, կը սպաննեն զայն:

Այդ օրերուն Արսէն Կիտուր յաճախ կ'ացելէր Պետրոսեան ընտանիքին: Ատեն մը ետք, անոր այցելութիւնները ընտանեկան հանգամանք կը ստանան ու ան կ'ամուսնանայ Պետրոսեանի դստեր՝ Զարուհիին հետ: Ամուսնութենէն մօտ տարի մը ետք, անգլիացիները Պաղտատ կը մտնեն 11 Մարտ, 1917-ին: Արսէն Կիտուր անգլիացի հազարապետ Մօտի քով թարգմանի պաշտօն կը ստանձնէ: Իր գործին հետ առնթեր ան կը մասնակցի հայահաւաքման առաքելութեան եւ բազմաթիւ հայեր կորուստէ ու մահուանէ կը փրկէ:

Պատերազմի ընթացքին բնականաբար դաշնակիցները իրարու հետ յաճախ կ'ապի մէջ կը մտնէին: Երջանի ապագային մասին բանակցելու համար ռուսական եւ անգլիական բանակի բարձրաստիճան սպաներ ժողով կը գումարեն: Արսէն Կիտուր ներկայ կը գտնուի բանակցութիւններուն իբրեւ թարգման, Պարսկաստանի Բակորա աւանին մէջ: Այդ օրերուն ռուսերը երկու հակառակ կողմերու բաժնուած էին՝ յեղափոխականներն ու ցարականները: Նոյնպէս այդ օրերուն «Տարագրելոց Պաշտպանութեան Մարմին»ը կազմուած էր: Արսէն Կիտուր բռն գործու-

նէութիւն կը տանէր: Պէտք էր որ հարիւր հազարաւորներու հասնող թափառական հայեր հաւաքել Տէր Զօրի անապատներէն:

Արսէն Կիտուր ազգային գործով Քերմանշահ կը մեկնի: Ան կ'անցնի Թիֆլիս եւ ապա՝ Պայագիտ, իր ծննդավայրը: Թիֆլիսի մէջ ան կը գործակցի Զօրավար Անդրանիկի, Վահան Թոթովենցի եւ ուրիշ պատասխանատու ազգայիններու հետ: Արսէն Կիտուր անոնց կը պարզէ Պաղտատի եւ Պարսկահայքի հայոց կացութիւնը: Ան նահատակ Ռուբէն Զարգարեանի տիկնոջ եւ զաւակին հետ հանդիպում մը կ'ունենայ, մեծ գրողին մասին տեղեկութիւններ փոխանցելու համար: Տիկին Զարգարեան մեծ յոյսերով կ'ապրէր թէ իր ամուսինը տակաւին ողջ էր: Վահան Թոթովենց նախապէս զգուշացուցած էր Կիտուրը թէ Ռուբէն Զարգարեանի նահատակութեան մասին չտեղեկացնի տիկինին: Արսէն Կիտուր այդ պատուէրը լիուրի կը կատարէ:

Թիֆլիսի մէջ Ա. Կիտուր Արեւմտահայ Խորհուրդի Գրասենեակին հետ ալ կը գործակցի: Այդ օրերուն ռուսական բանակի զինուորներ դասալիք ըլլալով «տուն» կը վերադառնային: Դաշնակիցները կը ջանային հայերէն գինուորական ոյժ մը կազմել թուրքերուն դէմ պատերազմը շարունակելու համար: Այս գործին մէջ նաեւ Զօրավար Անդրանիկի կողքին, Ա. Կիտուր իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէ:

Արսէն Կիտուր Պայագիտ կը վերադառնայ, իր ծննդավայրին ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու: Քիւրտերը յաճախ կը յարձակէին Պայագիտի հայոց վրայ, թալանելու եւ սպաննելու համար: 1917-ի վերջերն էին: Թաթարները թուրքիան ունէին իբր յեղափոխականները գերմանացիներուն կը վստահէին: Հայերը առանձին եւ սեփական ոյժերով իրենց գոյութիւնը պէտք էր որ պահէին: Ա. Կիտուր Պայագիտի բոլոր մարդու-

ժը կը հաւաքէ ու կը կազմակերպէ: Կային նաեւ դուրսէն եկող կռուող հայեր իրենց կողքին: Սակայն քիւրտերն ու թուրքերը այնքան շատ էին թիւով եւ զէնքերով գորաւոր, որ հայերը կը ստիպուին նահանջ մը կազմակերպել Պայագիտը կրակի տակ յետոյ: Պայագիտցիները Սեւանայ լիճի ափի գիւղերը կ'ապաստանին: Այդ շրջանը Նոր Պայագիտ կը կոչեն:

Արսէն Կիտուր Զօրավար Անդրանիկի գորաբաժնին մէջ պատասխանատու պաշտօնով Պարսկահայք կը մեկնի, հայապաշտպանման սուրբ գործով:

«Յուշեր Ու Փուշեր»ու հեղինակը՝ Արսէն Կիտուր յարատեւ կը շարունակէ ահաբեկուած հայ խլեակները հաւաքել: Այս ուղղութեամբ ան իր մտահոգութիւնը հետեւեալ խօսքերով կը յայտնէ:

«...պէտք կը զգայի բարձրացնել ժողովուրդի բարոյական կորովը, արթնցնել անոր մէջ հայրենասիրական աւելնը եւ կապել զայն ներգաղթի զաղափարին»:

Վերջապէս արժանի է մէջբերել Արսէն Կիտուրի մասին գրած Ռուբէն Տէր Մինասեանի վկայութիւնը. «Արսէն Կիտուրի շնորհիւ էր որ ստացուեց եգիպտացի կոնզակը եգիպտացիներու ուղղուած, որով կը յանձնարարէր բոլոր եգիպտացիներին, իրենց բախտը կապել հայութեան եւ Հայաստանի հետ եւ հայ կուլտուրան ընդունիլ իբր իրենց սեփականութիւնը:» (Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, 7-րդ հատոր, էջ 173):

Ռուբէն Տէր Մինասեան Արսէն Կիտուրի եւ ուրիշներու մեծ նպաստը կը յիշէ ասորիներու հետ լաւ յարաբերութիւններ մշակելու գործին մէջ: Ան կը հետեւցնէ. «Ան (ասորիներու հետ լաւ յարաբերութիւններու մշակումը - Յ. Ի.) ունեցաւ իր քաղաքական նշանակութիւնը, որովհետեւ 60,000 ասորիներու շահագրգռութիւնը Վանից հարաւ գտնուող շրջաններով, մեզ դնում էր դաշնակցի վիճակի մէջ (էջ 199 - Յ.Ի.)»: